

Իլիամ Ալիև. «Հայերու Փողերով Ապրող Գոնկրէսականները Պատերազմ Յայտարարած են Ատրպէյճանի Դէմ»

«Հայերու փողերով ապրող որոշ երեսպաշտ գոնկրէսականներ, արեւմտեան քաղաքական գործիչներ եւ իսլամատեացիներ պատերազմ յայտարարած են Ատրպէյճանի դէմ», - Պաքուի մէջ կայացած կառավարութեան նիստի ընթացքին յայտարարած է Իլիամ Ալիև:



Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիև

Ատրպէյճանի նախագահի ամբողջ ելոյթը Արեւմուտքի հետ յարաբերութիւններու ուղղուած էր: Ալիև նոյնիսկ անուղղակիօրէն քննադատեց իր հօր կառավարման տարիներու գլխաւոր դիւանագիտական նուաճումներէն մէկը՝ երկրի անդամակցութիւնը Եւրոպայի Խորհուրդին:

«Եւրոպական խաղերու ժամանակ Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը բանաձեւ մը ընդունեց, որու նախագծին մէջ զեկոնցողները կ'առաջարկէին գրել՝ վեհաժողովը նկատի կ'առնէ այն փաստը, որ ատրպէյճանական հողերը գրաւուած են: Այդ ձեւակերպումը, սակայն, փոխուեցաւ, եւ բանաձեւում հետեւեալ ձեւակերպումը ստացաւ՝ վեհաժողովը նկատի կ'առնէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գոյութիւնը: Այս յստակ հակաստրպէյճանական մտտեցում էր: Այնպէս որ, ես կը կարծեմ, որ եթէ մենք այսօր ստիպուած ըլլայինք կատարել այդ ընտրութիւնը, գուցէ եւ ընդհանրապէս հրաժարէինք Եւրոպայի Խորհրդի անդամակցելու գաղափարէն», - յայտարարած է Իլիամ Ալիևը՝ աւելցնելով, որ 2001-ին այդ քայլին Պաքուն նոյն հայերու պատճառով

ուով դիմած էր. - «Մենք գիտէինք, որ Հայաստանը շատ կը փափաքէր դառնալ Եւրոպայի Խորհուրդի անդամ, ուստի մենք ալ որոշեցինք անդամակցել այդ կառուցին»:

Ատրպէյճանի նախագահը շեշտած է, թէ Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի ընդունած այդ բանաձեւը Պաքուի համար որեւէ նշանակութիւն չունի. - «Այդ թուղթի կտոր է»:

Իլիամ Ալիևի համոզմամբ, թուղթի կտոր է նաեւ Յունիսի 12-ին Գերմանիոյ Խորհրդարանի երկու պալատներէն մէկուն՝ Պունտեսթագի կողմէ ընդունուած բանաձեւը, որով գերմանացի օրէնսդիրները կոչ կ'ընէին պաշտօնական Պեռլինին ուշադրութիւն դարձնել Ատրպէյճանի մէջ մարդու իրաւունքների լայնածաւալ խախտումներուն:

Հայաստանի Նոր Սահմանադրութեան Նախագծով Բանակի Գերագոյն Հրամանատարը Վարչապետն Է

Յուլիս 15-ին հրապարակուեցաւ Հայաստանի սահմանադրութեան 1-7 գլուխներու նախագիծի նախնական տարբերակը՝ հանրային քննարկումներու համար:

Սահմանադրութեան նախագծի նախնական տարբերակի 5-րդ գլուխով (Հանրապետութեան Նախագահը), մասնաւորապէս, նշուած է, որ Հանրապետութեան նախագահը պետութեան գլուխն է եւ կը մարմնաւորէ ազգային միասնութիւնը:

«Հանրապետութեան նախագահն ընտրուած է եօթ տարի ժամկէտով, նոյն անձը Հանրապետութեան նախագահ կարող է ընտրուել միայն մէկ անգամ», ըսուած է Սահմանադրութեան նախագծի 124-րդ յօդուածով:

Յօդուած 125-ը կը սահմանէ, որ Հանրապետութեան նախագահը կ'ընտրուի ընտրիչներու ժողովին

կողմէ: Ընտրիչներու ժողովը կազմուած է Ազգային ժողովի պատգամաւորներէն եւ Ազգային ժողովի պատգամաւորներու թուին հաւասար տեղական ինքնակառավարման մարմիններուն կողմէ իրենց կազմէն ընտրուած ներկայացուցիչներէն:

Նախագծի 6-րդ գլուխով (Կառավարութիւնը) կը սահմանուի, որ Կառավարութիւնը գործադիր իշխանութեան բարձրագոյն մարմինն է, այն իր ծրագրի հիման վրայ կը մշակէ եւ կ'իրականացնէ պետութեան ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը եւ կ'իրականացնէ պետական կառավարման համակարգի ընդհանուր ղեկավարումը:

«Պատերազմի ժամանակ զինուած ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատարը վարչապետն է», նշուած է Սահմանադրութեան նախագիծի 154-րդ յօդուածով:

Հայաստան Կ'ողջունէ Իրանական Միջուկային Ծրագրի Շուրջ Համաձայնութիւնը

Արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան՝ անդրադառնալով Իրանի միջուկային ծրագրի շուրջ Իրանի եւ «վեցնեակի» միջեւ գոյացած համաձայնութեան ըսած է որ, Հայաստան կ'ողջունէ Իրանի եւ միջազգային միջնորդներու նպատակաւայաց, կառուցողական ջանքերու արդիւնքով Իրանական միջուկային ծրագրի շուրջ ձեռք ձգուած համաձայնութիւնը: «Երկար սպասուած

այս պայմանաւորուածութիւնը կարեւոր ձեռքբերում է՝ ի նպաստ միջազգային, տարածաշրջանային կայունութեան եւ համագործակցութեան ամրապնդման: Լիալոյս ենք, որ դա յաւելեալ խթան կը հանդիսանայ՝ Հայաստանի եւ բարեկամ Իրանի միջեւ առեւտրատնտեսական համագործակցութեան ընդլայնման, համատեղ ծրագրերի իրականացման համար», - ըսած է Նալբանդեան:

Ղարաբաղ Կը Մերժէ Տարածքներ Վերադարձնելու Մասին՝ Ուորլիքի Խօսքերը

Լեռնային Ղարաբաղի նախագահի մամլոյ խօսնակ Դաւիթ Բաբանեան կտրականապէս մերժար է ԵԱՀԿ Մինսկի խումբի Ամերիկացի համանախագահ Ճէյմզ Ուորլիքի յայտարարութիւնները, «գրաւուած տարածքներ» Ատրպէյճանի վերադարձնելու մասին:



Մինսկի Խումբի ամերիկացի համանախագահ Ջէյմզ Ուորլիք

Ուորլիք պատասխանելով ուսական «Վեդոմոստի» թերթի հարցումին, թէ պէ՞տք է արդեօք, որ Հայաստան ազատէ Ատրպէյճանի տարածքները, որոնք հակամարտութենէն առաջ մաս չէին կազմէր Ղարաբաղի մարզին, եւ ի՞նչ է այս մասին Ուաշինկթընի դիրքորոշումը, ըսած է. - «Գրաւուած տարածքները պէ՞տք է վերադարձուին Ատրպէյճանին՝ ամբողջական կարգաւորման շրջագիծէն ներս: Այստեղ կարեւոր է չկեղծողնանալ կարգաւորման մէկ սկզբունքի կամ տարրի վրայ: Տարածքները պէ՞տք է վերադարձուին, սակայն կան նաեւ այլ գործօններ»:

«Պաշտօնական Ստեփանակերտի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծ-

ման հարցում մնացել է անփոփոխ. կարեւորագոյն առանցքային ուղղութիւնն այն է, որ վերացուեն հակամարտութեան պատճառները եւ ոչ թէ հետեւանքները: Այդ մասին Panorama.am-ի թղթակիցի յայտարարած է Դաւիթ Բաբանեան՝ մեկնաբանելով Ջէյմզ Ուորլիքի

Կարօ Փայլան Հաւասար Պայմաներ Կը Պահանջէ Ոչ Սահմանաւորու Յամար

Փոքրամասնութիւններու տօներուն մասին Թուրքիոյ ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան շարքերէն երեսփոխան ընտրուած հայազգի Կարօ Փայլան իր հերթական ծրագիրը ներկայացուց Խորհրդարանի ղեկավարութեան: Փայլան կ'առաջարկէ գլխաւոր կամուրջներու եւ մայրուղիներու գործածութիւնը անվճար դարձնել ոչ միայն մասնատական տօներուն, այլ Թուրքիոյ մէջ ապրող բոլոր փոքրամասնութիւններու կրօնական տօներուն ընթացքին:



Թուրքիոյ հայազգի երեսփոխան Կարօ Փայլան

«Երթեկութիւնը անվճար դարձնելու սովորութիւնը պէ՞տք է ի գործ ըլլայ նաեւ քրիստոնեաներու, հրեաներու, եգիպտացիներու եւ

այլ փոքրամասնութիւններու տօներուն ընթացքին: Այս ժողովուրդները այս հողին վրայ ապրած են հազարաւոր տարիներ, սակայն անոնց տօները այսօր կ'արհամարհուին պետութեան կողմէ», ըսաւ Փայլան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանը սկսում է նոր խաղ

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

Յայտնի է դարձել, որ ԲՀԿ պատգամաւոր վարդան Օսկանեանը կուսակցութիւն է բացում: Նա նման մտադրութիւն ունէր նախքան ԲՀԿ-ին անդամակցելը, սակայն ի վերջոյ գերադասեց գործունէութիւն ծաւալել «արդէն իսկ եղած կուսակցութիւնում»:

ԲՀԿ-ն ներկայացնում էր մի կոնգրամներատ, որտեղ հաւաքուել էին մի քանի «քաղաքական» ու բիզնէս խմբաւորումներ՝ իրենց շահերով ու նպատակներով: Փետրուարի 12-ին ԲՀԿ-ն «ցրուեց», եւ այն, ինչ մնացել է նրանից, ըստ էութեան անցել է Յովիկ Աբրահամեանի տնօրինութեան տակ: ԲՀԿ-ից «ճիւղաւորուել է» Ալեանս կուսակցութիւնը: Միւսները ինքիւրը մնում է բաց, եւ ահա Օսկանեանը կուսակցութիւն է բացում:

Մամուլն անմիջապէս արձանագրեց, որ այս կուսակցութիւնը գրաւուելու է Քոչարեանի շահերի պաշտպանութեամբ ու լոբբինգով: Պէտք է նշել, որ բաւական լուրջ գործառնոյթ է, նկատի առնելով տնտեսական ու այլ բնոյթի ահաբեկիչ շահերը: Նոր ստեղծուելիք այս կուսակցութեան առանձնայատկութիւնն այն է լինելու, որ նա խորհրդարանում արդէն իսկ ունի մի քանի պատգամաւոր եւ կարող է ձեւաւորել «խմբակցութիւն»: Բաւարար կը լինի՞ արդեօք այդ գործառնոյթը յաջորդ խորհրդարանում յայտնուելու համար:

տի ունենալով նրա ոճն ու մեթոդները՝ «բոլորին դասաւորել պահարանում, ոչ մէկին չթողնել դրսում, պահարանի դուռը փակել ու բանալին դնել գրպանում», այդ խաղը խոստանում է հետաքրքիր վերադասաւորումներ ու «հակակշիռներ», որոնք Սերժ Սարգսեանին թոյլ կը տան պահպանել իր ներկայութիւնն ու ազդեցութիւնը նախագահի պաշտօնը թողնելուց յետոյ:

Արդեօք գործ ունենք քաղաքական համակարգի արդիակաւնացման եւ նոր իրավիճակին ադապտացուելու հետ: Հայաստանում քաղաքական համակարգը որպէս այդպիսին չի կայացել, իսկ քաղաքական խմբաւորումներն իրենցից ներկայացնում են առեւտրային կազմակերպութիւններ, որոնք պարբերաբար գործարքներ ինքնուրուի վերահսկում են իշխող քրէաօլիգարխիկ համակարգի ցուցանակներով, որոնց ներքոյ «լեզուի մասնակցութիւնը» է քրէաօլիգարխիայի գործունէութիւնը:

Հայաստանի քաղաքական կուսակցութիւնները 2014 թ. Դեկտեմբերի 4-ին միաձայն (բացի Ժառանգութիւն խմբակցութիւնից եւ հատուկէնտ պատգամաւորներից) քուէարկեցին Հայաստանի ինքնիշխանութիւնը յանձնելու օգտին, որը յաւերժական խարան է նրանց վրայ, որից չկայ ազատում ու արդարացում:

Ներկայում Հայաստանը յայտն-

Ղարաբաղեան խնդրում ինչ-որ բան է փոխում

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորըլիքը յայտարարել է, որ մեկնում է Մոսկուա՝ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան թեմայով խորհրդակցութիւնների: Ում հետ, ինչպէ՞ս, որտե՞ղ, ի՞նչ բովանդակութեան շուրջ. այս հարցերը անյայտ են, ինչպէս եւ, ըստ էութեան, միշտ էլ անյայտ են եղել Ղարաբաղեան բանակցութիւնների ողջ պատմութեան ընթացքում: Յայտնի է միայն, որ մոսկովեան խորհրդակցութիւնները յաջորդում են մի քանի օր առաջ Ուաշինգտոնում տեղի ունեցած հանդիպումներին: Կը լինեն հանդիպումներ նաեւ Փարիզում թէ ոչ՝ առայժմ պարզ չէ: Միաժամանակ պարզ է, որ համանախագահները Յուլիսի վերջին այցելելու են տարածաշրջան եւ փորձելու են հանդիպումների ընթացքում նախապատրաստել Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահների հանդիպում: Որտե՞ղ տեղի կ'ունենայ հանդիպումը՝ անորոշ է: Մինչ այժմ խօսուել է Նիւ Եորքում ՄԱԿ-ի գլխաւոր Ասամբլեայի շրջանակում հնարաւոր հանդիպման մասին: Ըստ որում՝ այդ մասին դեռեւս նախորդ տարի՝ Հոկտեմբերի 27-ին, Փարիզում Ֆրանսիայի նախագահ Օլանդի հովանու ներքոյ տեղի ունեցած հանդիպումից յետոյ էր յայտարարուել, էլ իստեան պալատի, այսինքն՝ Ֆրանսայի նախագահական նստավայրի մակարդակով: Դրանից յետոյ, ի հարկէ, շատ ջրեր հոսեցին, լարուածութեան շատ առիթներ եղան, որոնց զագաթնակէտը կարելի է համարել Հայկական ուղղաթիռի խոցումն ու յետագայ զարգացումները:

Յետագայում խօսակցութիւններ ակտիւացան միջնորդների ֆորմատի փոփոխութեան շուրջ, եղան քննարկումներ Մինսկի խմբի լայն ֆորմատով: Սակայն ի վերջոյ յայտարարուեց, որ Մինսկի խմբի ֆորմատի փոփոխութիւն չի լինի:

Չարագացումների այս շղթան հանգեցրել է Մինսկի խմբի շրջանակում քաղաքական խորհրդակցութիւնների փուլի եւ, ամենայն հաւանականութեամբ, չփոփոխուող ֆորմատում կարող են տեղի ունենալ բովանդակային փոփոխութիւններ: Յամենայն դէպս, եթէ քաղաքական խորհրդակցութիւնների իմաստը սա չէ, ապա հարց է առաջանում, թէ էլ ի՞նչ իմաստ ունեն այդ խորհրդակցութիւնները:

Ակնյայտ է, որ առկայ բովանդակութիւնն ըստ էութեան վերածուել է բուտաֆորիայի եւ հանգեցրել սահմանում իրավիճակի լարուածութեան, միջադէպերի եւ զոհերի աճի: Երկու տարի շարունակ հանրութիւնները ակաւնատես են եղել հենց այս իրողութեան: Եւ եթէ կայ ինքիւր՝ դադարեցնել այս ամէնը, ապա բնականա-

բար պէտք է լինի բովանդակային փոփոխութեան հարց, որպէսզի պատերազմը, լինի դա մեծածաւալ թէ, այսպէս ասած, դիւերսիոն դանդաղ պատերազմ, դադարի լցնել բովանդակային վակուումը:

Այդ լարուածութիւնն առաջանում է բովանդակային վակուումից:

Եթէ Սարգսեան-Ալիեւ հանդիպումը նախաձեռնուել է նոր բովանդակութեան շրջանակում, ապա այստեղ իհարէ կարող են լինել ակնկալիքներ, որ այդ հանդիպումը կը բերի լարուածութեան թուլացման եւ կայունութեան աւելի հաստատուն վերականգնման:

Միւս կողմից՝ իհարկէ շատ կարեւոր է, որ այդ բովանդակութիւնը լինի այնպիսին, որը ըստ էութեան չի խախտի Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի անվտանգութեան ներկայիս մակարդակը: Որովհետեւ եթէ բովանդակային փոփոխութիւնը տեղի ունենայ նման խախտումների հաշուին, ապա կայունութիւնը չի կարող երկարատեւ լինել, եւ դա ըստ էութեան կը նշանակի, որ լարուածութեան գնով ինչ-որ բանի հասնելու ատրպէյճանական քաղաքականութիւնն արդարացել է, եւ ուրեմն արդարացել է նաեւ ուսական եւ թուրքական աջակցութիւնը այդ քաղաքականութեանը: Իսկ սա էլ իր հերթին կը նշանակի, որ վաղ թէ ուշ այդ քաղաքականութեան ջատագովները կրկին կը հանգեն այն կրկնելու եւ արդիւնքներ ստանալու մտքին, եւ դարձեալ ամէն ինչ կը վերադառնայ ի շրջանս իւր:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Սերժ Սարգսեանը փորձում է այս իրավիճակում հաստատել «սահմանադրական կարգ»՝ Սահմանադրութեան փոփոխութեան միջոցով համակարգը բերելով նոր պայմանաւորուածութիւնների դաշտ:

Հայաստանում ներքաղաքական հետաքրքիր տեղաշարժեր են նկատուել՝ քաղաքական դաշտը «թարմացնելու» եւ խորհրդարանը «քաղաքականացնելու» ուղղութեամբ: Այս տեխնոլոգիան արդէն իսկ փորձարկուեց Բաղրամեան պողոտայի իրադարձութիւնների ժամանակ: Ստեղծուել են նոր կուսակցութիւններ նոր դէմքերով, որոնք չաւակնում են գրաւել թէ «հների» տեղը, թէ առաջադրել արտաքին ու ներքին կողմնորոշումների նոր մօտեցումներ:

Օրինակ, Նիկոլ Փաշինեանի հիմնած Քաղաքացիական պայմանագիրը կարող է գրադեցնել փաստացի գոյութիւն չունեցող ՀԱԿ-ի տեղը, իսկ Էդմոն Մարութեանի հիմնելիք կուսակցութիւնը նպատակ ունի գրադեցնել «ոչ պրո-ուսական» տարածութիւնը քաղաքական դաշտում:

Դաշնակցութիւնը իշխանութեան հետ աւանդաբար քննարկում է իր ապագայ տեղն ու դերը, իսկ ՕԵԿ-ը տրանսֆորմացուել է Հայկական վերածնունդ անունը կրող միաւորման, որտեղ հաւաքուել են սովորաբար ԲՀԿ-ի ու ՕԵԿ-ի ընտրագնազուածը կազմող «մարգինալներն» ու հանրութեան «չափաւոր բողոքական» շերտեր:

Կարծես թէ ուրուագծուել է ողջ սպեկտրը, որը փորձելու է այս կամ այն կերպ ներկայացուած լինել նոր խորհրդարանում: Սերժ Սարգսեանն այսպիսով ունենում է ներքաղաքական խաղի համար լայն մասնակցի հնարաւորութիւն: Նկա-

ուել է նոր իրավիճակում, երբ երկրի թէ քաղաքական, թէ տնտեսական կառուցուածքը համարժէք չեն այդ իրավիճակին եւ սպառուել են անհնարինութեան աստիճան: Սերժ Սարգսեանը փորձում է այս իրավիճակում հաստատել «սահմանադրական կարգ»՝ Սահմանադրութեան փոփոխութեան միջոցով համակարգը բերելով նոր պայմանաւորուածութիւնների դաշտ: Բնական է, որ խօսք չի կարող լինել ընտրութիւնների ու ազատ մրցակցութեան մասին, եւ նոր իշխանութիւնը ձեւաւորուելու է այդ պայմանաւորուածութիւնների հիման վրայ:

Ընդ որում, կարծես թէ այս հարցում «համաձայնութիւն» է ձեռք բերուել նաեւ արտաքին կենտրոնների հետ, որոնք Հայաստանում այդպէս էլ չեն գտել գործընկերներ, որոնց կարելի էր ներգրաւել մեծ քաղաքականութեան որոշակի ուղղութիւններում:

Արդեօք «նոր իշխանութիւնը» համարժէք է լինելու այս խնդիրներին եւ տարբերուելու է «հին ուժերից»: Մի բան յստակ է, որ Հայաստանում իշխանութեան ձեւաւորման գործընթացը, չափապէս իշխանութեան «փոխանցման» ժամանակաշրջանում, ներքին մեխանիզմների ոչնչացման պայմաններում դարձել է արտաքին կենտրոնների խնդիրը: Այս տեսակէտից, խաղի «անվերահսկելիութիւնը» կարող է լուրջ ջնջումներ ի պատճառ դառնալ:

«ԼՐԱԳԻՐ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 email: massis2@earthlink.net

Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բողոքի Երթերը Շարունակուում Են



Երեսուցի հրապարակներում վրայ նստացոյցի մասնակիցները

«Ոտքի՛ Հայաստան» նախաձեռնությունը բողոքի երթ անցկացրեց Բաղրամեան պողոտայից մինչև Մելիք-Աղամեան փողոց՝ ՀՀ Գրասենեակ:

«Ոտքի՛ Հայաստան» նախաձեռնությունն յայտարարեց, որ առաջիկայում մի շարք բողոքի ակցիաներ է կազմակերպելու: Նախաձեռնությունն անդամներն այցելելու են մարզեր, ինչպես նաև փողոցներ են փակելու: Պայքարի նոր փուլի մասին նրանք խօսեցին Բաղրամեան պողոտայի այն հատուածում, որտեղ օրեր շարունակ բարիկադներ էին տեղադրուած:

«Ոտքի՛ Հայաստան»-ը նաև նախագահ Սերժ Սարգսյանին ուղղուած նամակ էր պատրաստել. ակցիայի ժամանակ ասացին, որ նամակը յանձնելու են ոչ թէ նախագահական նստավայր, այլ Հանրապետական կուսակցության գրասենեակ, քանի որ իրենց համար Սերժ Սարգսյանը նախագահ է:

Նախաձեռնությունն անդամ Դաւիթ Սանասարեանը ասաց, որ սակազնի բարձրացման որոշման չեղարկումը շարունակում է իրենց հիմնական պահանջը մնալ:

«Մենք շարունակելու ենք մեր քաղաքացիական անհնազանդությունն այնքան ժամանակ, մինչև որ Հանրային ծառայությունները կարգաւորող յանձնաժողովը չեղեալ ճանաչի սակազնի բարձրացման մասին իր ընդունած որոշումը: Եթէ մինչև Օգոստոսի 1-ը ՀԾԿՀ-ն չընդունի այդ որոշումը, մենք կը շարունակենք քաղաքացիական անհնազանդությունը»:

Մեկնարկեց Սեյրան Օհանեանի Կնոջ Գործով Աղմկահարոյց Դատավարութիւնը

«Հրապարակ» օրաթերթի դէմ ՀՀ Պաշտպանութեան նախարարի կողմից Ռուզաննա Խաչատրեանի ներկայացրած հայցը, որով նա օրաթերթից պահանջում է հերքում տպագրել եւ ներողութիւն խնդրել իրեն գրապարտելու համար, ենթակայ է քննութեան: Այս մասին Յուլիսի 14-ին, Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանում գործով առաջին դատական նիստին ասաց օրաթերթի ներկայացուցիչ Տիգրան Աւետիսեանը:

Ներկայացուցիչը դատարանին միջնորդեց կարճել գործի վարույթը, դատարանը յետաձգեց միջնորդութեան քննարկումը: Դատարանը յետաձգեց նաև յօդուածի հեղինակ, լրագրող Մուրադեան Սիմոնեանի միջնորդութեան քննարկումը՝ իր մասով վարույթը կարճելու վերաբերեալ: Սիւզաննա Սի-

րական անհնազանդութիւնն այնքան ժամանակ, մինչև պետությունը չյարուցի քրէական գործեր կնքեմիկ ոլորտը փլուզման եզրին հասցրած բոլոր պաշտօնեաների դէմ», - յայտարարեց Սանասարեանը:

Զուգահեռաբար սակազնի բարձրացման դէմ պայքարում է նաև «Ո՛չ թալանին» նախաձեռնությունը: «Ոտքի՛ Հայաստան»-ից Անդրիաս Դուկասեանն ասաց՝ դեռ ուսումնասիրում են, թէ ինչ է կատարում «Ո՛չ թալանին» նախաձեռնությունը ներսում:

«Անձամբ ինձ, օրինակ, պարզ է՛ ով է ընդունում այդ խմբում որոշումներ, համապատասխանում են այդ որոշումները այդ խմբի՛ ի սկզբանէ հռչակած սկզբունքներին, նպատակներին եւ խնդիրներին: Երբ այդ հարցերը յստակ կը լինեն, հնարաւոր կը լինի պատասխանել՝ համագործակցութեան եզրեր կան, թէ՛ ոչ»,- ասաց Դուկասեանը:

Համագործակցելուն դէմ չեն նաև «Ո՛չ թալանին» նախաձեռնությունում, բայց երկու խմբերն էլ շարունակում են առանձին գործել:

«Ո՛չ թալանին» նախաձեռնությունը Երեւանի կենտրոնում բողոքի երթ անցկացրեց, որն աւարտուեց գլխաւոր դատախազութեան դիմաց: Յուզարարները նամակ յանձնեցին գլխաւոր դատախազութիւն՝ պահանջելով պատժել Բաղրամեան պողոտայում քաղաքացիների հանդէպ բռնություն կիրառուած ոստիկաններին:

«Ո՛չ թալանին» նախաձեռնութիւնը Երեւանի կենտրոնում բողոքի երթ անցկացրեց, որն աւարտուեց գլխաւոր դատախազութեան դիմաց: Յուզարարները նամակ յանձնեցին գլխաւոր դատախազութիւն՝ պահանջելով պատժել Բաղրամեան պողոտայում քաղաքացիների հանդէպ բռնություն կիրառուած ոստիկաններին:

Յիշեցնենք, որ Կարէն Մեծլումեանը դիմել է դատարան՝ «Հրապարակ» օրաթերթից պահանջելով հրապարկել իրենց պատասխանը, հերքում տալ «Հանրութիւնն ուզում է իմանալ» վերտառութեամբ յօդուածին եւ ներողութիւն խնդրել Ռուզաննա Խաչատրեանից: Յիշեցնենք, որ այդ յօդուածում յղում է արուել hzham.am կայքին, որտեղ գրուած է՝ Ռուզաննա Խաչատրեանը, վարելով ընկերոջ մեքենան, վթարի է ենթարկուել, ինչի հետեւանքով մարդ է մահացել:

ՀՀ-ն Արդարադատութեան Նախարարի Հրաժարականը Զի Կապում Նոր Կռակիցիայի Ձեւաւորման Հետ

Արդարադատութեան նախարար Յովհաննէս Մանուկեանի հրաժարականը իշխող Հանրապետական կուսակցութիւնում չեն կապում նոր կռակիցիայի ձեւաւորման կամ սահմանադրական փոփոխութիւններով պայմանաւորուած քաղաքական հնարաւոր վերադասաւորումների հետ:

Հանրապետական խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը «Ազատութեան» հետ զրոյցում չցանկացաւ կարծիք յայտնել հրաժարականի վերաբերեալ, միայն նշեց, որ այդ պարագայում Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը տալու վերաբերեալ լայնօրէն շրջանառուող տեսակէտները ընդամէնը տեսակէտներ են:

Յովհաննէս Մանուկեանը արդարադատութեան նախարարի պաշտօնում աշխատեց ընդամէնը 1 տարի 2 ամիս: Նա այն պաշտօնեաներից էր, որի անուան հետ որեւէ սկանդալ չի կապուել, նախարարը միշտ աչքի է ընկել զսպուածութեամբ: Նրա գործընկերների մօտ էլ առկայ է այն համոզմունքը, որ Յովհաննէս Մանուկեանը վիրաւորուած էր, քանի որ իրեն չեն ընդգրկել սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի կազմում:

«Աննրբանկատ վերաբերմունք է դրսևւորուել Յովհաննէս Մանուկեանի նկատմամբ. նա ոչ միայն պէտք է ընդգրկուած լինէր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովում, այլև իր ծանրակշիռ խօսքը պէտք է ասէր այդ յանձնաժողովի կազմում՝ հանդիսանալով ոչ միայն վճռաբեկ դատարանի նախկին նախագահ, այլ նաև գործող արդարադատու-

թեան նախարար: Եւ ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների նախաձեռնարկը արդարադատութեան նախարարի խորհրդաւոր հեռանալը կարող է վկայել, որ կամ նա սկզբունքային անհամաձայնութիւն է ունեցել բարեփոխումների նախագծի վերաբերեալ, կամ անձնական վիրաւորուածութիւն է ունեցել յանձնաժողովում չընդգրկուելու առումով, կամ նրան հեռացրել են: Բոլոր տարբերակներն էլ խօսում են մեր կառավարման համակարգի անորակութեան, ախտահարուած լինելու մասին»,- «Ազատութեանը» ասաց փաստաբան Նորիկ Նորիկեանը:

Որոշ մեկնաբաններ համոզուած են, որ Մանուկեանը Ռոբերդ Քոչարեանի եւ Յովիկ Աբրահամեանի կողմն է:

Վերլուծաբան, «Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանը «Ազատութեան» հետ զրոյցում կարծիք յայտնեց, որ Արդարադատութեան նախարարութիւնը անգործունակ, անկարելոր մի օղակ է, որը սահմանադրական փոփոխութիւնների արդիւնքում կարող է առհասարակ դադարել այս տեսքով գոյութիւն ունենալ:

Անդրադառնալով է Յովհաննէս Մանուկեանի կարծատեւ պաշտօնավարմանը՝ Բաբաջանեանն ասաց.- «Նա եկաւ որպէս Յովիկ Աբրահամեանի կադր, քարտ բլանշ էր տրուած նոր վարչապետին՝ իր նախընտրած կադրերով գալ եւ փոփոխութիւններ բերել: Այդ փոփոխութիւնները հնարաւոր չեղան բերել, որովհետեւ իրողութիւններին էին տարբեր եւ իրականում այն լծակները, որ կ'ուզէր Յովիկ Աբրահամեանը ունենալ, նրան չտրուեցին»:

Խմբագիրները Հայաստանում Ազատ Մամուլի Նկատմամբ Ծնշումներ Են Արձանագրում

Առաջատար մի շարք թերթերի եւ էլեկտրոնային պարբերականների խմբագիրներ հանդէս են եկել համատեղ յայտարարութեամբ, որում արձանագրում են, որ «Հայաստանում ազատ մամուլի նկատմամբ ճնշումները ոչ միայն չեն թուլանում, այլ ձեռք են բերում նորանոր, առաւել անյաղթահարելի դրսևւորումներ»:

Յայտարարութեան հեղինակները, մասնաւորապէս, անդրադառնում են Յունիսի 23-ին Բաղրամեան պողոտայում էլեկտրաէներգիայի թանկացման դէմ խաղաղ ցոյցի մասնակիցների, ինչպէս նաև ցոյցը լուսաբանող լրագրողների նկատմամբ ոստիկանութեան գործադրած բռնութիւններին, վերջիններիս մասնագիտական տեսչական կոտորելու, յիշողութեան կրիչների առգրաւման դէպքերին, նկատելով. «Յատկապէս մտահոգիչ է այն, որ բռնութեան ենթարկուած բոլոր լրագրողներն էլ կրում էին համապատասխան վկայագրեր եւ նրանց՝ լրագրող լինելու մասին ոստիկանութեան աշխատակիցները քաջատեղեակ էին, ուստի կարելի է արձանագրել, որ Յունիսի 23-ին ոստիկանութիւնը միտումնաւոր կերպով փորձ է արել խոչընդոտել լրագրողների աշխատանքը: Մտահոգիչ է նաև այն, որ այս արարքին անմիջապէս համապատասխան իրաւական ընթացք

չտրուեց: Ամբողջ տասն օր երկմտելուց յետոյ միայն՝ Յուլիսի 3-ին, օրէնքով սահմանուած վերջին օրը յատուկ քննչական ծառայութիւնը քրէական գործ յարուցեց: 2004թ. Ապրիլից յետոյ սա աննախադէպ երեւոյթ է, որը համապատասխան իրաւական գնահատականի չարժանանալու դէպքում կարող է անցանկալի հետեւանքներ ունենալ Հայաստանում խօսքի ազատութեան վրայ»:

Խմբագիրները նշում են. «Մամուլի վրայ ակնյայտ յարձակումից գատ վերջին օրերին փորձ է արուած վերաթարմացնել նաև Հայաստանում անկախ մամուլին դատական գործընթացների միջոցով ֆինանսական ճնշումների ենթարկելու պրակտիկան»:

Թուրքիայի մամուլի փաստերի մի քանի օրինակ, խմբագիրները եզրակացնում են. «Մենք՝ ներքստորագրեալ լրատուամիջոցների ղեկավարներս, դատապարտում ենք խօսքի ազատութեան դէմ իրականացուող վերը թուարկուած բռնաճնշումների բոլոր ձեւերը՝ կոչ անելով իշխանութիւններին 1. ձեռնպահ մնալ մամուլի գործունէութիւնը սահմանափակող ցանկացած քայլից, 2. ձեռնարկել միջոցներ լրատուամիջոցներին օժանդակելու, նրանց գործունէութեան անկախութեան երաշխաւորը լինելու ուղղութեամբ»:

ԼՈՒՐԵՐ

Ինչպես կ'ազդի Իրան—«Վեցեակ» Գործարքը Հայաստանի Տնտեսութեան Վրայ

Իրանի եւ միջազգային միջնորդ «Վեցեակի» միջեւ իրանական միջուկային ծրագրի հարցով ձեռք բերուած համաձայնութիւնը իրանագէտ Մհեր Բաղդասարեանը համարում է ուրախ գործողութիւններ սկսելուց հետո իրողութիւն, սակայն փաստում, որ, իհարկէ, Հայաստանի բարեկամ իրանի դիրքերի ամրապնդումը միջազգային ոլորտում նաեւ ի շահ Հայաստանի կը լինի:

«Իրականում պէտք է այդքան կարեւորութիւն տալ, սա քաղաքական խաղերի ինչ-որ հանգրուան է, որից յետոյ էլ բացառուում իրան-Արեւմուտք յարաբերութիւնների ամենամանրամասնական գարգացումները: Բայց ամէն դէպքում Հայաստանի համար իրանը բարեկամ երկիր է, որը բաւական օգնում է Հայաստանին դուրս գալ շրջափակումից եւ ուստի իրանի դիրքերի ամրապնդումը միջազգային ոլորտում, որոշակի ազատականացումը կ'աշխատի նաեւ ի շահ Հայաստանի: Հայաստանի հետ բարեկամական կապը դեռ այն ժամանակից էր, երբ Զորջ Բուշ կրտսերը սպառնում էր իրանին եւ բոլոր երկրներին կոչ անում միանալ սանկցիաններին», - Tert.am-ի հետ զրոյցում ասաց նա:

Ըստ նրա՝ համաձայնագրի իրագործման դէպքում Հայաստանը կը շահի, երբ որ տարածաշրջանում լինի խաղաղութիւն, կաշուն ֆինանսական հիմքեր, որը կը խթանի առեւտրային գարգացումը: Իրանի հետ կարեւոր նախագիծ նա համարում է իրան-Հայաստան երկաթուղու շահագործումը,

սակայն նշում, որ այն էլ բխում նոյն Արեւմուտքի շահերից, քանի որ երկաթուղի կը լինի մետաքսի ճանապարհի մի մաս:

Իրանագէտը նշեց, թէ էլ գտնում, որ համաձայնագիրը 30-ամեայ պատմութիւն ունեցող ինդիան կտրականապէս կարող է փոխել դէպի լաւը: «Այնքան խոր է նստած այդ ինդիանը, իրան-ԱՄՆ յարաբերութիւնները, որ նոյնիսկ սահմանադրօրէն ամրագրուած կէտեր կայ, երկիրը պէտք է սահմանադրութիւն փոխի, որպէսզի հետագայում կարողանան հարցեր կարգաւորել», - ասաց նա:

Հարցին, թէ ինչու է Արեւմուտքը զնում այդ քայլին, նա պատասխանեց, թէ իրանի հետ յարաբերութիւնների վերանայումը սկսուեց այն ժամանակ, երբ պատժամիջոցներ կիրառեցին արդէն Ռուսաստանը դէմ եւ իրանի դէմ այս քայլը ուղղակի երկարաձգելու համար է, հասկանալու գարգացումները: Նա յիշեցրեց, որ Ռուսաստանի պայմանաւորուածութիւնը Չինաստանի հետ, որն ուղղակի ԱՄՆ-ի եւ դոյրի շահերին է հարուածում, իսկ այդ պայմանաւորուածութեան մէջ իրանը դիտարկուած է որպէս երրորդ կամ չորրորդ մասնակից կողմ:

«Հիմա որպէսզի երկարաձգի ինչ-որ մի շրջան, քանի որ եթէ իրանի հետ շարունակեք նոյն չոր տօնով, հաւանականութիւնը մեծ էր, որ իրանն աւելի շուտ կը ստորագրէր եւ կը միանար Ռուսաստան-Չինաստան համագործակցութեան այդ թուղթը:

Ֆրանսիայի դեսպան. «Տարածաշրջանում Հայաստանը Ծառայում Ե Որպէս Կայունացնող Բեւեռ»

«Մարդիկ պէտք է ազատութիւն ունենան իրենց կամքը արտայայտելու», - անդրադառնալով վերջին շրջանում Հայաստանում ծագած բողոքի ակցիաներին՝ յայտարարեց Ժան-Ֆրանսուա Շարպանտիէն:

Միաժամանակ, ասուլիսի ընթացքում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը «նորմալ» համարեց իշխանութիւնները միջամտութիւնը. - «Ի սկզբանէ ուշիու չուով հետեւել ենք ընթացող գարգացումներին: Հայաստանում տեղի ունեցած վերջին գարգացումները վերաբերում են երկրի ներքին կեանքին, եւ ես, բնականաբար, չեմ կարող մեկնաբանութիւններ անել: Բայց, գարգացումներին հետեւելով, կարող եմ ասել՝ բոլորի ցանկութիւնն է, որ հնարաւորինս արագ լուծում գտնուի: Ի դէպ, սպաւորութիւն ունեմ, որ ցոյցերը մեղմուել են: Բնական է ու շատ նորմալ, որ ժողովրդավարական երկրում ինչ-որ բանի հետ չհամաձայնող մարդիկ ելոյթ ունենան: Սա հնարաւորութիւն է, որ իրենք իրենց դժգոհութիւնը կարողանան արտայայտել: Բնականաբար, մարդիկ պէտք է ազատութիւն ունենան՝ իրենց կամքը արտայայտելու, բայց, միւս կողմից, նորմալ է, որ պետական իշխանութիւնները միջամտեն, որպէսզի ապահովեն հասարակական կարգը»:

Յունիսի 23-ին Բաղրամեան պողոտայում եւ Ազատութեան հրապարակում ոստիկանութեան գործադրած բռնութիւններին՝ այդ թուում լրագրողների նկատմամբ, նոյն օրը յայտարարութիւններով արձագանքեցին Հայաստանում Միացեալ Նահանգների, Եւրամիութեան ու Մեծ Բրիտանիայի դիւանագիտական ներկայացուցչութիւնները՝ հրապարակաւ մտահոգութիւն յայտնելով ոստիկանների կողմից ցուցարարների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման եւ լրագրողների դէմ գործադրուած բռնութիւնները:

Human Rights Watch-ը Թափանցիկ Բնութիւն Անցկացնելու Կոչ Ե Անում Ոստիկանութեան

Human Rights Watch-ի փոխտնօրէն կոչ է անում Հայաստանի ոստիկանութեանը Յունիսի 23-ի կապակցութեամբ անցկացուող ծառայողական քննութիւնը թափանցիկ տանել, որպէսզի հանրութիւնը կարողանայ գնահատել զանազան զանգուշաբանութիւնները կարգապահական ստոյգ բաւարար է:

«Ազատութեան» հետ զրոյցում Human Rights Watch-ի Եւրոպայի եւ Կենտրոնական Ասիայի գծով փոխտնօրէն Ռէյչել Դենբերը ընդգծեց՝ անթոյլատրելի է ուժի կիրառումը, երբ բողոքի ակցիան խաղաղ է:

«Հարկաւոր է ամբողջական հետաքննութիւն անցկացնել ոստիկանների գործողութիւնների կապակցութեամբ, եւ դատախազը պէտք է որոշում կայացնի, թէ ի՞նչ կարգի հետաքննութիւն, պատասխանատուութեան ենթարկելու ինչպիսի՞ գործընթաց պէտք է սկսել: Կարող են լինել դէպքեր, երբ կարգապահական ստոյգ բաւարար է, բայց կարող են լինել դէպքեր, երբ այդ ստոյգից աւելին անելու անհրաժեշտութիւն կայ: Կարեւոր է, որ հետաքննութիւն տեղի ունենայ, եւ դրա արդիւնքները հրապարակուեն, որպէսզի հանրութիւնը կարողանայ գնահատել՝ արդեօ՞ք հետաքննութիւնը արդար էր ու օբեկտիւ», - ասաց Դենբերը:

Յունիս 13-ին հրապարակուեց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի որոշումը, ըստ որի Երեւանի Բաղրամեան պողոտայում եւ Ազատութեան հրապարակում Յունիսի 23-ի ոստիկանական գործողութիւնների առնչութեամբ ինը ոստիկան կարգապահական ստոյգի է ենթարկել: Ոստիկանութեան ծառայողական քննութիւնը դեռ աւարտուած չէ:

Յիշեցնենք, այդ օրը բողոքի խաղաղ ակցիայի մասնակիցներին եւ լրագրողներին ոստիկանները ոչ միայն ծեծեցին, այլեւ խոչընդոտեցին լրագրողների աշխատանքը, կտրեցին տեսախցիկներ, լրագրողներին պատկանող այլ սարքաւորումներ:

Յատուկ քննչական ծառայութիւնում քրէական գործ յարուցուեց տեղի ունեցածի կապակցութեամբ, իսկ մարդու իրաւունքները պաշտպանը յայտարարեց, թէ այդ օրը ոստիկանները գործել են ոչ իրաւաչափ եւ խախտել են օրէնքը:



Ֆրանսիայի դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ

Ծաղրուած բռնութիւնների կապակցութեամբ: Ռուսաստանի դեսպանը միջադէպի յաջորդ օրը կարեւորեց կայունութիւնը եւ իրավիճակի հանգուցալուծումը իրականացնելու:

«Ազատութեան» ինդրանքով Ֆրանսիայի դեսպանը ներկայացրեց իր կարծիքը. - «Մեր կարծիքով, տարածաշրջանում Հայաստանը ծառայում է որպէս կայունացնող բեւեռ: Սա այն երկիրն է, որտեղ հերթափոխի սկզբունքով ու կանոնաւոր տեղի են ունենում ընտրութիւնները: Այս տեսանկիւնից իրավիճակը Հայաստանում մեզ բաւարար է թուում: Մեր, Եւրամիութեան ընդհանուր գնահատականն է, որ Հայաստանի որդեգրած դիրքորոշումը ճիշդ ուղու վրայ է, թէեւ եղել են որոշ ինդրայարոյց ոլորտներ, որոնք մենք մատնանշել ենք, մեր դիրքորոշումն ենք արտայայտել՝ արդարադատութեան համակարգ, կանոնք նկատմամբ բռնութիւններ, ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ ինչ-որ դրսեւորումներ»:

Շարպանտիէն «առանձնապատուկ եւ բարձրակարգ» բնորոշեց հայ-ֆրանսիական յարաբերութիւնները, որոնք «ընթանում են անկեղծ, բարեկամական միջնորդում»:

Ինչու է Նուազել ԱՄՆ-ից Ու Եւրոպայից Զբօսաշրջիկների Թիւր

Այս տարի Հայաստան այցելող զբօսաշրջիկների թուի նուազում է նկատուում, ինչը արձանագրել է նաեւ պաշտօնական վիճակագրութիւնը: Թէեւ նոր տուեալներ չկան, սակայն առաջին եռամսեակի տուեալներով՝ Հայաստան այցելած զբօսաշրջիկների թիւը, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ, 4.0 տոկոսով պակաս է եղել: Ոլորտի մասնագէտներն այս իրավիճակը մի քանի գործօններով են բացատրում:

«Արմենիա թրավել» տուրիստական ընկերութեան ներգնայ տուրիզմի մասնագէտ Յակոբ Կտրեանը զբօսաշրջիկների հոսքի նուազման գլխաւոր պատճառներից մէկը համարում է այն, որ Հայաստանի եւրոպական շատ երկրների հետ ուղիղ չուերթ չունի:

«Մենք ունենք Եւրոպայից ընդամենը մէկ թռիչք, որն Աւստրիական աւիաուղիներն է իրականացնում: Նաեւ «Էյր Ֆրանս» է չուերթներ կատարում, որի գները թանկ են: Եւրոպայից այլ ուղիղ չուերթներ չունենք, ժամանակին ունէինք լեհական LOT-ը, Չեխական աւիաուղիները, որոք մրցունակ գներ էին առաջարկում, նրանց հեռանալը ինդիաներ ստեղծեց: Իսկ եթէ, օրինակ, Նորվեյիայից ու Շուեդիայից զբօսաշրջիկը Հայաստան գալու տարբերակ չունի, 2-3 երկիր է փոխում, դա արդէն դժուարութիւններ է ստեղծում», - նշեց մեր զրուցակիցը:

ման վրայ, ըստ մասնագէտի, ազդել է նաեւ ուկրաինական պատերազմը, քանի որ եւրոպացի զբօսաշրջիկները տարածաշրջանն ամբողջութեան մէջ են դիտարկում, բացի այդ, յաճախ տարածաշրջանային փաթեթներով են կազմակերպում իրենց հանգիստը:

«Իրենք մի երկրում առկայ ոչ հանգիստ վիճակը կապում են ամբողջ տարածաշրջանի երկրներին հետ: Եւրոպացի զբօսաշրջիկները մեծամասամբ ճանաչում են տարածաշրջանը, Հայաստանը չեն ճանաչում», - ասաց նա:

Զբօսաշրջիկների հոսքի նուազման վրայ, մասնագէտի խօսքով, ազդել են նաեւ Հայաստանի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: «Այն, որ Ռուսաստանի հանդէպ Հայաստանը շատ լաւ դիրքորոշում ունի, դա ոչ բոլորին է դուր գալիս՝ հաշուի առնելով Ռուսաստանի նկատմամբ կիրառուած պատժամիջոցները: Հիմնականում եւրոպական եւ ամերիկեան զբօսաշրջիկների դէպքում է նկատուում սա, իսկ Հայաստան եկող զբօսաշրջիկների հիմնական մասը հենց Եւրոպայից ու ԱՄՆ-ից են», - նշեց նա:

Յակոբ Կտրեանի խօսքով՝ այս տարի թանկացել են տուրիստութեան գները, ինչը եւս պատճառ է, որ աւելի քիչ զբօսաշրջիկներ են այցելում մեր երկիր: Նա նշեց, որ գների թանկացումն անմիջապէս կապուած է միւս ոլորտներում արձանագրուած գնաճի հետ:

ՊԱՊԻ ՅԱՄԱՐԶԱԿՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԵՑ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Հռոմի Ֆրանցիսկոս Պապի՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու մասին համարձակ յայտարարութիւնը փոխեց ամբողջ աշխարհի վերաբերմունքը: Այս մասին Հռոմում տուած հարցազրոյցում յայտարարել է Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկոսների առաջնորդ Ռաֆայէլ Ֆրանսուա Մինասեանը, գրում է News.am-ը:



նապանքներն անդրադարձել են յետագայ սերունդների վրայ: Ռաֆայէլ Ֆրանսուա Մինասեանը նշել է, որ նոյնիսկ այն հայերը, որոնք 1915 թուականի կոտորածների անմիջական ականատեսները չեն եղել, մինչև հիմա տառապում են դրանց հետեւանքներից:

Ըստ «Independent Catholic News»-ի, արքեպիսկոպոսը ողջունել է Հռոմի Պապի կողմից հայերի զանգուածային սպանդի ճանաչումը: «Մենք վստահ էինք, որ Պապը կը չիշի Ցեղասպանութեան մասին, եւ նրա համարձակութիւնը փոխեց աշխարհի վերաբերմունքը», - ընդգծել է Մինասեանը:

Արեւելեան Եւրոպայի կաթողիկոսների առաջնորդը նաեւ նշել է, որ 1915 թուականի Ցեղասպանութեան ժամանակ պատճառուած տա-

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՏԱԿԱՌՆԵՐՈՎ ՈՒՄԲԵՐԻ ՊԱՅԹԻՆ ՅԱԼԵՊԻ ՄԷՋ

Անցնող շաբաթուան ընթացքին բուռն յարձակումները շարունակուեցան կառավարական ուժերու եւ Տահէշականներու միջեւ: «Ալ ժազիրա» տեղեկատու գործակալութեան համաձայն առնուազն 35 հոգի մահացած եւ 50 ուրիշներ վիրաւորուած են Հայէպի մէջ: Բախումներուն թիրախն էր Տահէշի գինեակներու խմբակցութիւնը, որոնց կեդրոնն էր Ալ Պապ աւանը: Ընդդիմադիրները կ'ամբաստանեն իշխանութիւնները, որոնք ուժերով լեցուն 8 տակառներ նետած են դէպի բնակավայրային թաղամասերն ու վառելանիւթի կայան մը:


Արդարեւ, անցեալ Շաբաթ նոյն ձեւի յարձակում մը եւս գործածուած էր միեւնոյն վայրին մէջ, պատճառ դառնալով 28 անձերու մահուան: Իսկ Կիրակի օր Հայէպի նշանաւոր բերդին տակը ընդդիմադիրներու գետեղած ուժերը կարելի եղաւ կազմալուծել վարչակարգային ուժերու կողմէ: Իսկ կառավարութիւնը հերքեց նման ձեւի ուժեր գործածուած ըլլալը:

ԻՐԱՔ ԿԸ ՍՏԱՆԱՅ ՉՈՐՍ F16 ՌԱԲԱԿՈՑԻՉՆԵՐ

Վերջերս Իրաք ստացաւ չորս F-16 տիպի ռազմական ուժեղացում օդանաւեր, վերատիրանալու համար Ալ Անպար նահանգին: Միւս կողմէն Իրաքեան եւ Իրանեան կարգ մը շրջանակներ կ'ամբաստանեն Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնց անուղղակիօրէն գորավիզ կը կանգնին Տահէշականներուն:

ՈՉ ԵՄ Է ՕՍԱՐ ՇԵՐԻՖ

83 տարեկան հասակին իր մահկանացուն կնքեց Օմար Շէրիֆը: Ծագումով լիբանանցի եւ համաշխարհային համբաւի է տիրացած դերասան Օմար Շէրիֆ, նախ որպէս եգիպտական սինեմայի աստղ մեծ հռչակ վայելած էր եւս ապա միջազգային համբաւի տիրացած: Բուն անունով Միշէլ Շալհուպ ան մեծ համբաւի տիրացաւ 50-ական թուականներէն սկսեալ: Հետզհետէ սկսաւ իր աստղը փայլիլ նաեւ Հոլիվուտի մէջ: Գլխաւորաբար մեծ վարկ չհասցաւ Lawrence of Arabia, Doctor Zhivago եւ «Մայրիկ» ֆիլմերու մէջ իր ստանձնած կարեւոր դերերով:



1955ին ամուսնացած էր արաբ նշանաւոր կինոյի աստղ՝ Ֆաթին Համամայի հետ եւ ապա ամուսնալուծուած:

1950ին իսլամացաւ եւ իր անունը փոխեց Օմար էլ Շէրիֆի: Յետագային «էլ»ը ջնջեց իր մականունի վրայէն: Ունի բազմաթիւ ֆիլմեր, որոնց շարքին 23 հատ արաբերէնով: Հետաքրքրական է նաեւ հեռատեսիլի համար իր դերակատարութիւնները («Անասթագիան» «Մեծն Կատարինէն» եւ «Տասը Պատուիրանները»):

Հանգուցեալը կը տառապէր «Ալզայմըրը» հիւանդութենէն, իսկ մահուան բուն պատճառը սրտի կաթնածանցն էր: Եգիպտական դրօշով պատուած իր դազադը Գահիրէի Մուշիր Թանթաուի մզկիթէն ուսամբարձ դուրս բերուեցաւ խուռներամ բազմութեան մը մէջէն եւ ապա թաղուեցաւ Գահիրէի հարաւը գտնուող Սայիտա Նաֆիա գերեզմանատան մէջ:

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՈԱԶՄԱՄԹԵՐՔ ԼԻԲԱՆԱՆԻՆ

Պէյրութ լոյս տեսնող Daily Star թերթէն կ'իմանանք թէ Լիբանանի մօտ ֆրանսայի դեսպանը իր պաշտօնավարութեան լրումին առթիւ, մեկնելէն առաջ յայտարարած է որ շուտով պիտի առաքուի գինամթերքի երկրորդ խմբաւորումը: Արդարեւ Լիբանանի յատկացուելիք այս գինամթերքը հետեւանքն է եռակողմանի համաձայնութեան մը, որ կնքուած էր Լիբանանի, Սէուտական Արաբիոյ եւ Ֆրանսայի միջեւ:

Ֆրանսայի դեսպանը վերահաստատեց, որ Փարիզ կը կարեւորէ լիբանանեան բանակին հետ համագործակցութիւնը եւ գինուորական հաստատութեան կարողութիւններուն ամրապնդումը: Փառլի այդ մասին յայտարարեց տեսակցելով պաշտպանութեան նախարար Սամիր Մուքպէլի հետ:

ԱՐԱՍ ԱՐՔ.ԱԹԵՇԵԱՆ ՊԻՏԻ ՄԵԿՆԻ ԱՆԹԻԼԻԱՍ՝ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԻՒՌՈՆՕՐՅՆԷՔԻՆ



Պոլսոյ Հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեան շաբաթավերջին պիտի այցելէ Անթիլիաս՝ մասնակցելու Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Արամ Ա. կաթողի կոսի նախագահութեամբ կատարուելիք միւլուոնօրհնէքի արարողութեան:

Հայկական պարբերականի ենթադրութիւններով՝ Արամ Աթէշեանի ուղեւորութիւնը հետաքրքրութիւն կը ներկայացնէ այն տեսանկիւնէն, որ Անթիլիասի եւ Պոլսոյ Հայոց պատրիարքարանի միջեւ այս շրջանին կան որոշակի չբարձրաձայնուած տարաձայնութիւններ: «Թէպէտ երկու կողմն ալ պաշտօնական մակարդակի վրայ

չեն ցանկանար բարձրաձայնել անոնց մա սին, սակայն յայտնի է, որ Սիսի կաթողիկոսարանը վերադարձելու Արամ Առաջինի քայլը Պոլսոյ Աթոռի կողմէ վերապահօրէն ընդունուած է: Պոլսոյ պատրիարքարանի անհանգստութիւնը մասնաւորապէս կապուած է այն հանգամանքի հետ, որ դատական հայց ներկայացնելէ առաջ Անթիլիասը բացարձակ կապ չէ պահպանած իրեն հետ: Նման իրավիճակի մէջ Արամ Առաջինի եւ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանի տեսակցութիւնը կրնայ առիթ հանդիսանալ տուեալ խնդրի արծարծման համար», կը գրէ Պոլսոյ «Ժամանակ»ը:

Ղարաբաղ Կը Մերժէ

Շարունակուած էջ 1-էն

լիքի յայտարարութիւնը: «Եթէ փորձ է արուած հետեւանքներին անդրադառնալ, առանց պատճառները հաշուի առնելու, սա լաւ բանի չի բերելու: Այն, որ այսօր ունենք այլ սահմաններ, այլ ռազմաքաղաքական իրավիճակ, սա պատերազմական պատճառների հետեւանք է, եթէ այդ պատճառները չեն լուծուած, ո՞նց կարող ենք անդրադառնալ հետեւանքներին», - աւելցուցած է խօսնակը:

ԵԱՀԿ Մինսկի խումբի համա- նախագահները Մոսկուա ժամանած

են ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման շուրջ խորհրդակցութիւններու նպատակով:

Թերթի հետ զրոյցի ընթացքին ամերիկացի համանախագահը ըսած է, որ Մոսկուայի մէջ կը խօսուին կարեւոր հարցերու մասին, որոնք կը քննարկուին շուրջ 10 տարիէ ի վեր:

«Անոնց շարքին են Լեռնային Ղարաբաղին կից տարածքներու վերադարձը, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, փախստականներու հետ կապուած իրավիճակը, անվտանգութեան երաշխիքները», - ըսած է ամերիկացի դիւանագետը:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Երեկոյ մը SARF-ի հետ

Սուրիահայութեան Զօրակցութեան Օժանդակ Մարմին

Վիճակահանութիւն

Հանդիպում SARF-ի ներկայացուցիչներուն հետ

Տեղեկացում՝ SARF-ի գործունէութեան մասին

Ընդունելութիւն՝ Զորեքշաբթի 5 Օգոստոս, 2015-ին

Երեկոյեան ժամը՝ 7:00-ին

Ս. Աստուածածին Եկեղեցոյ Սրահին մէջ

500 S. Central Ave. Glendale, CA

ԻՇԽԵԼՈՒ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՄԻՋԵՒ

ԱԻՆԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Իշխելու եւ կառավարելու տարբերութիւնը տակաւին չսորվեցան:

Հաւաքական հայրենիքի եւ սեփական ազարակի զանազանութիւնը դեռեւս չընկալեցին:

Գեղակերտ եկեղեցիներ կառուցելու մրցապայքարի ելան, կրօնական արարողութեանց առաջին շարքերը խճողեցին, Տէրունական աղօթքէն բառեր սկսան կմկմալ, բայց չհարցուցին թէ Հայ Եկեղեցւոյ եօթ մեղքերէն ազահութիւնն ու որկրամոլութիւնը ի՞նչ կը նշանակեն, որո՞նց կը վերաբերին: Անոնք որոնք ընտրուեցան կառավարելու համար, կարծեցին թէ ի վերուստ նշանակուած են իշխելու համար: Հայրենիքը նմանեցաւ լափամանի, իւրաքանչիւր իշխանաւոր անկէ մեծ բաժին մը լափելու համար:

Ինչ պատկերաւոր է այն խօսքը, որ կ'ըսէ. «մեղր բաժնողը մեղրի համին կը նայի». սա հասկնալի է արդէն. բայց ամբողջ մեղրը կուլ տալու իշխանաւորներու մոլուցքը քաղցածները կը փոթորկէ, ընկերային հակասութեան խրամատը կը խորացնէ, երկրին բնականոն կեանքը կը խախտէ:

Վերջերս անհանգիստ էր Երեւանը: Գլխաւոր պողոտան՝ Բաղրամեանը փակ էր ցուցարարներու պատճառով: Ելեկտրական գինի բարձրացումը փողոց նետեց դառնացած եւ բարկացած ժողովուրդը: Այս անգամ ալ «Ոչ Թալանին» անունով շարժումն էր առաջատարը մինի-քառսին:

Արդեօք միայն ելեկտրակառուցման սակազիւնը ալեկոծեց հայրենի կեանքը: Ոչ. այլ տարիներու ընթացքին կուտակուած մաղձը, որ օրըստօրէ կը լեղիանայ՝ ի տես շահագործումներու, ամենաթողութեան, անպատժելիութեան եւ անաւարտութեան: Եւ վերջապէս թալանախտը նոր չէ, այլ վերջին տարիներու համատարած վարակ մը:

Այս թէժ եղելութեանց մէկ տաք պահուն, երբ հեռաձայնեցի Երեւան առաւել իրազեկուելու, ընկալուչին միւս կողմէ պատասխանը սա էր.

-Ինչու, ե՞րբ հանգիստ եղած է որ Երեւանը: Որմէ ետք երբ մտաբերեցի վերջին քսանամեայ հայրենի կեանքը՝ արիւնալի ցոյցերու, «մաքրագործումներ»ու, թալանի, զանգուածային փախուստներու, թաքուն գործարքներու, ընկերային պոռթկումներու անվերջանալի շղթան, հաստատեցի խօսակցիս մուսլ յիշեցումը:

Հայաստանի առաջին նախագահը երկրորդ անգամ կասկածելիօրէն նախագահ «ընտրուելէ» ետք (1996), իր իշխանութիւնը հաստատելու համար հարկադրուած եղաւ բանակը ի գործ դնել զժգոհ եւ թերահաւատ ցուցարարները ցրելու համար: Բիրտ ուժի կիրարկումով տիրեց անդորրութիւն: Ներ-քաղաքական եռեւեփուն մթնոլորտը չսրելու մտահոգութեամբ ան կիսատ թողելով իր պաշտօնավարութեան շրջանը՝ հրաժարեցաւ: Ժողովուրդի հաւատքէն մասնիկ մը փրթաւ: Ապա, երկրորդ նախագահին ժամանակաշրջանը (1998-2008) քաղաքական վերլուծաբաններ կը բնութագրեն «արիւնոտ տանամեակ»: Ան, 2003-ին, նախագահական ընտրութիւններէն ետք, նոյնպէս դիմեց բանակին՝ ընդդիմադիր հոծ ցուցարարները ցրելու եւ կայունութիւն հաստատելու նպատակով: Իր օրերուն սեւ խարանով դաշուեցաւ Հոկտեմբեր 27-ին նախճիրը: Ժողովուրդին մօտ թերահաւատութիւնը արմատ նետելու սկսաւ: Երրորդ նախագահը պաշտօնը չստանձնած, 2008-ին Երեւան թատերաբեմ հանդիսացաւ Մարտ մէկեան արիւնալի ընդհարումներու, որուն զոհ գացին 10 հայտղիներ: Ժողովուրդին մօտ անվստահութիւնը նոր երանգ ստացաւ:

Վերջին մի քանի տարիներուն, ինչպիսի տարբերութիւններու եւ հանրահաւաքներու ակնատես եղանք. -թեղուտի եւ բնապահպանութեան ի նպաստ ցոյցեր, հայկական դպրոցի ազգային նկարագրի պաշտպանութեան ի խնդիր բողոքի հաւաքներ, «Նայիրի» գործարանի չվճարուած բանուորներու յաճախակի հաւաքներ, երթուղայիններու 50 դրամի յաւելումի դէմ բողոքի երթեր «Չեմ վճարելու» կարգախօսով, չբացալայտուած հանգամանքներով խաղաղ պայմաններու մէջ զոհուած զինուորներու մայրերու ընդվզումներ, 2013-ին նախագահական ընտրութիւններէն ետք պարտեալ թեկնածու Ռաֆֆի Յովհաննէսեանի կիսատ մնացած «Բարեւի Յեղափոխութեան» ժողովուրդային երթեր, թոշակներու պարտադիր կուտակումներու դէմ պոռթկումներ, միջին խաւի առեւտրականներու վրայ հարկային ճնշումներու դէմ հաւաքներ, Մաշտոցի պուրակի հարց, թաքսիի վարորդներու բողոքներ, Օրինաց Երկիր կուսակցութեան եւ ՀԱԿ-ի հաւաքներ, Շանթ Յարութիւնեանի մտացածին յեղափոխութիւնը, Քառեակի եւ ապա Եռեակի հոծ հանրահա-

"The European Union programs are steadily integrating in our ideology. We are re-affirming our support to the cultural diversity as integral part of human civilization and we are determined

and said:

"With recent inclusions, Turkey now has 15 sites on the World Heritage Sites list. The most recent inclusions are the Diyarbakir Fortress and Hevsel Gardens Cultural Landscape and the ancient city of Ephesus. In September, a UNESCO team will carry out its final examination in Kars. We expect the ancient city of Ani to be included on the permanent list as the 16th World Heritage Site in Turkey by the end of this year."

Ani was once the capital of a medieval Armenian kingdom that covered much of present-day Armenia and eastern Turkey. Ani is protected on its eastern side by a ravine formed by the Akhurian River and on its western side by the Bostanlar or Tzaghkotzadzor Valley. The Akhurian is a branch of the Aras River and forms part of the current border between Turkey and Armenia.

to provide all guarantees," she said.

Ms Poghosian said Armenia welcomes the idea of uniting for preserving cultural heritage and against cultural genocide.

Delegates from forty-five countries and organizations are participating in the conference.

Haigazian University's 60th Gala Celebration Haigazian Women's Auxiliary—The Beginning



LOS ANGELES, CA — Mountain top experiences take many forms. In 1958 Virginia Harikian, a devoted Armenian Evangelical, attended a Christian Family Retreat at Forest Home — an idyllic setting in California. Being inspired by the First President of Haigazian College, Dr. John Markarian, and his concern for the plight of Armenian students in Beirut, Lebanon, she approached two ladies also attending the retreat—Elizabeth Agbabian and Suzie Phillips. She suggested they form a Women's Auxiliary, not only to introduce the local Armenian community to the College, but also to raise funds.

Haigazian College (as it was called then) was newly founded, and was the only Armenian College outside Armenia. It was named after esteemed Professor, Dr. Armenag Haigazian. This fledgling auxiliary, developed into one of the most important grass-roots group eventually raising over \$1,000,000 for the school.

The original concept was to have neighborhood coffee hours to acquaint friends with the College. Gradually, this base of friends grew. The first tea was held in the beautiful Bel Air garden of Mrs. Sirpuhe Philibosian Conte featuring harpists Carol Eskijian Kazanjian and Rosemarie Kassabian Tuncer. The ticket price was \$5.00.

The next step was to increase membership by hosting membership teas. Annual dues were \$2.00. These highly anticipated events were received with enthusiasm by the ladies. Christmas Boutiques were a big draw. A crafts workshop, spearheaded by Evelyn Levonian, produced unique Christmas items. One such event was held at the home of Suzie Phillips. The overwhelm-

ing response had ladies lined around the block waiting to get in. The committee even cooked and served the luncheon.

Needless to say, as the group grew, the events planned by the Auxiliary became more sophisticated—with the ticket price increasing and sponsors encouraged.

A major turning point in the focus of the Auxiliary outreach changed when fortuitously, Joyce Philibosian Stein, with her husband Joe, moved to Los Angeles. She immediately was invited to join the Auxiliary, and remained its president for years. It was then, though her many contacts in the cultural life of Los Angeles, that exhilarating programs were planned with an exciting response from the community.

Events highlighting, art shows, auctions, notable political leaders, acclaimed authors, eminent educators, playwrights, luminaries from the world of music at the Music Center events with Maestro Plácido Domingo, Maestro Zubin Mehta (at the invitation of Francis Heifetz,) and Soprano Kaleen Esperian, all creating interest in Auxiliary events over the many years.

Acknowledging the Auxiliary for their years of devotion, a Women's Auxiliary Assembly Room is named in their honor at the University.

The October 3rd 60th Anniversary Gala Celebration will be the launch of a \$6,000,000 endowment fund expansion campaign for Haigazian University. Celebrations will continue after the performance with a Black Tie Gala Supper in the stunning Grand Hall of the Dorothy Chandler Pavilion.

For Ticket information call 1-844-809-4860 or visit the website www.haigazian.org

Return to 1991 Borders is Out of Question

Continued from page 1

cattle died at that time, numerous people were hospitalized," Babayan said.

In response to the remark that after making a statement about the need to return territories, James Warlick spoke about the necessity to deploy peacekeepers to ensure the security of the NKR, David Babayan said: "What can peacekeepers do if the USSR with its huge army failed to solve that problem? For many years, we have protected our borders without peacekeepers, and everything is all

right, there are no problems. Everything is more stable than in many other conflict zones".

Speaking about the statement of NKR Defense Ministry saying that unlike the situation in the last few days, Azerbaijani troops have begun to violate the ceasefire more frequently on the line of contact between the armed forces of Karabakh and Azerbaijan and on July 14 Azerbaijan used 60 mm mortars – in addition to small arms – in the southern direction, Babayan did not consider it a strange thing.

"Baku has always behaved like

Ararat Convalescent Hospital Celebrates 35 Years of Care, Receives a Prestigious Award



EAGLE ROCK, CA -- Ararat Home proudly announces that Ararat Convalescent Hospital has been recognized as a 2015 recipient of the *Bronze - Commitment to Quality Award* for its dedication to improving the lives of residents through quality care and performance excellence. This national award is presented annually by the American Health Care Association, which represents more than 12,000 non-profit and proprietary long-term and post-acute care facilities. Ararat Convalescent Hospital was among only 19 Bronze Award recipients in California.

Implemented in 1996, the National Quality Award Program has three progressive levels: Bronze, Silver and Gold. The awards recognize those facilities that are committed to and are progressing in their quality efforts by delivering ever-improving value to residents and families and by improving overall organizational capabilities and performance.

Administrator Varsenik Keshishyan said, "We could not have celebrated our 35th year milestone under better circumstances. Ararat Convalescent Hospital is honored by this Bronze Award recognition. We have long been committed to making the delivery of quality,

compassionate care our primary focus. Thanks to everyone who has contributed to Ararat Convalescent Hospital's success, we have now laid a strong foundation to continue our quality journey by striving for the Silver and Gold levels."

This year, Ararat Convalescent Hospital celebrates its 35th anniversary. On that occasion, a celebratory luncheon was held at the facility for trustees, administration and staff. Several employees received recognition and special lapel pins for their years of service to Ararat Home. Mayor Ara Najarian sent the Convalescent Hospital a certificate of commendation on behalf of the City of Glendale.

"We wholeheartedly congratulate our Administrator and the entire Ararat Convalescent Hospital staff for their outstanding recent accomplishment as well as their achievements over the last 35 years," stated Board Chairman Joseph Kanimian, Esq. "Ararat Home is that unique center, where our precious elders receive the best care in an Armenian environment. The Board of Trustees expresses its gratitude to our staff, volunteers and donors for their unparalleled devotion to Ararat Home's mission."

AMAA Facilitates Donation of Medical Equipment to the Central Military Hospital of the Republic of Armenia

On June 20th, AMAA Life Member, Dr. Chris Tashjian, joined by Harout Nercessian, AMAA's Representative in Armenia, fellow philanthropists Dr. Vartkes and Mary Najarian; Davit Tonoyan, Deputy Minister of the Republic of Armenia's Defense Ministry; A. Abreamov, First Deputy Chief of General Staff Lieutenant-General; Colonel A. Asadouryan the Chief of the Clinic of the Central Military Hospital; and Ruzanna Khatchaturyan, President of the Armenian Association of Military Doctors and wife of the Republic of Armenia's (RA) Defense Minister Seyran Ohanyan, visited the Central Military Hospital of the RA.

The group viewed various de-

partments in the Hospital, checked the newly donated electronically controlled beds and medical equipment, and spoke with military patients who are undergoing treatment in the Hospital.

Through the creative and tireless efforts of Dr. Tashjian, who secured and handled the transport of the beds and medical equipment (valued at \$300,000) to Armenia, the AMAA undertook the feat of having the beds and equipment received and delivered to the Hospital.

The Central Military Hospital of the RA, located in Yerevan, provides advanced healthcare to servicemen and their families. All guests promised that donations of medical equipment to the Military Hospital will be continuous.

Azerbaijan was and remains a terrorist and fascist state. We cannot expect anything else from that country," the NKR president's spokesman said.

that. It just restrained itself for ten days in connection with the European Games, in its own interests. It does not mean that Azerbaijan's policy has changed.

ԲԵՍԱԴՐՈՒԵԼ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒՐՈՒԲԾ «ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ» ԲԱԼԵՏԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նուիրված «Արշիլ Գորկի» բալետային ներկայացումը յանձնուել է հայ հանրության դատին: Մէկ գործողութեամբ բալետը գոյների, շարժումների բազմազանութեամբ, զգացմունքայնութեամբ եւ իւրայատկութեամբ անտարբեր չթողեց հանդիսատեսին: Փաստի ապացոյցն անվերջ ձգուող ծափահարութիւններն էին: Ներկայացումն առաջին անգամ ցուցադրուել է Յուլիսի 9-ին ԱԼ Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, տեղեկացնում է «Արմենպրէս»-ը:



րէս»-ի հետ գրոցում նշել է «Բարեկամութիւն» անսամբլի տնօրէն՝ Տիգրան Մխոյեանը:

Ներկայացման բեմադրիչն է Արսէն Մեհրաբեանը (Շվեդիա): Որպէս մենակատարներ հանդէս են գալիս Շվեդական արքայական բալետի հիմնական մենապարող Արսէն Մեհրաբեանը, Բաւարիայի պետական բալետի հիմնական մենապարող Տիգրան Մխոյեանը, բալետի առաջատար մենապարուհի Մարիա Դիւանեանը եւ այլ յայտնի մենապարողներ: Երեկոյի առաջին հատուածում հանդէս եկաւ Հայաստանի պարարուեստի «Բարեկամութիւն» պետական համոյթը, որը ներկայացրեց Նորայր Մեհրաբեանի «Հերոսական բալլադը»:

«Արշիլ Գորկի» բալետային բեմադրութիւնն իրականացուել է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի աջակցութեամբ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԲԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ



Յունիսի 20-ին, Հայաստանի Հանրապետութեան Կեդրոնական Զինուորական Հիւանդանոցը այցելեցին Տօքթ. Քրիս Թաշճեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) Հայաստանի ներկայացուցիչ՝ Յարութ Ներսէսեան, Տօքթ. Եւ Տիկին Վարդգէսեան Մարի Նաճարեաններ, ՀՀ Պաշտպանութեան Նախարարի Տեղակալ՝ Դաւիթ Տոնոյեան, Գլխաւոր Շտապի Պետի Առաջին Տեղակալ՝ Է. Ա. Ապրիանով, Կեդրոնական Զինուորական Հիւանդանոցի Պետ՝ Գնդապետ Ա. Ասատուրյան եւ ՀՀ Պաշտպանութեան Նախարար Սէյրան Օհանյանի Տիկինը՝ Ռուզաննա խաչատրյան:

Հիւրերը այցելեցին Հիւանդանոցին տարբեր բաժանմունքները եւ քննեցին հիւանդանոցին

նուիրուած բժշկական սարքաւորումները եւ էլէկտրոնային կառավարմամբ մահճակալները: Անոնք առիթը ունեցան նաեւ հանդիպելու հիւանդանոցին մէջ բուժուող զինծառայողներուն հետ:

Տօքթ. Թաշճեանի անխոնջ ջանքերով ձեռք բերուած շուրջ 300,000 տոլար գնահատուող բժշկական սարքաւորումներու եւ մահճակալներու նուիրատուութեան եւ Հայաստան առաջման ընդունման եւ յանձնումի գործընթացը ստանցնած էր ԱՀԱԸ-ը:

ՀՀ Կեդրոնական Զինուորական Հիւանդանոցը կ'ապահովէ առաջնահերթ առողջապահական ծառայութիւն հայրենիքի զինծառայողներուն եւ անոնց ընտանիքներուն: Հիւրերը խոստացան շարունակել նմանատիպ նուիրատուութիւնները հիւանդանոցին:

ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ ՀԱՄԵՐԳ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿՈՂՄԷ

Սուրիահայուցութեան Օժանդակութեան Միացեալ Մարմինը (SARF) կը տեղեկացնէ որ ընդառաջելով կատարուած խընդրանքին, Համազգայինի Սայաթ Նովա Երգչախումբը եւ Անի Պարախումբը որոշած են յատուկ ելոյթով մը իրենց մասնակցութիւնը բերել Սուրիահայուցութեան համար կատարուող նպաստի աշխատանքներուն:

Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կլէնտոնի Երկրորդական Վարժարանի հանդիսասրահին մէջ Հոկտեմբեր 18, 2015-ին: Ծրագրին մաս պիտի կազմեն հայրենասիրական եւ ժողովրդային երգեր ու հայկական տոհմիկ պարեր: Երեկոյթի հասոյթը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Սուրիահայուցութեան շտապ օգնութեան:

«Չափազանց խանդավառ եւ

զգացուած եմ որ Համազգայինի Սայաթ Նովա երգչախումբի եւ Անի Պարախումբի նման անուանի միաւորներ որոշած են սոյն միացեալ ելոյթով նեցուկ կանգնել բոլոր այն Հայերուն որոնք այս օրերուն կը տառապին Սուրիոյ դաժան քաղաքացիական պատերազմին պատճառով: Կոչ կ'ուղղեմ մեր հայրենակիցներուն ներկայ գտնուելու այս ձեռնարկին ոչ միայն նիւթապէս օգտակար հանդիսանալու՝ այլ նաեւ ցոյց տալու այս շարիքի հեղինակներուն որ Սուրիահայուցութիւնը առանձին չէ» յայտնեց SARF-ի ատենապետ ձանթի թիղզեան:

Հանդէսի զեղարուեստական դեկորացիան են՝ Նորա-Րումեան Պայրամեան (երգչախումբ) եւ Սուզի Բարսեղեան-Դարբինեան եւ Եղիա Հոշալեան (պարախումբ):

ՌՈՒԲԵՐ ԳԵԴԻԳԵԱՆԸ ԻՐ «ԽԵՆԹ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ՖԻԼՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ֆրանսահայ ռեժիսոր, դերասան, սցենարիստ եւ պրոդիւսեր Ռոբեր Գեդիգեանի՝ Հայոց ցեղասպանութեան թեման բարձրաձայնող «Խենթ պատմութիւն» կինոնկարը Նոյեմբերին կը ցուցադրուի Ֆրանսայում, իսկ յաջորդ տարի՝ այլ երկրներում: Այս մասին Յուլիսի 13ին լրագրողների հետ գրոցում տեղեկացրեց Ռոբեր Գեդիգեանը:

մութիւնը դառնում է մի ամբողջ մարդկութեան պատմութիւն:

«Ֆիլմը եղել է միայն Կաննում, դեռեւս այլ վայրերում էլ ցուցադրուել», - յաւելեց նա:

«Խենթ պատմութիւն» ֆիլմը մեկնարկում է Սողոմոն Թեհլերեանի յայտնի դատավարութեամբ, այնուհետեւ կինոդիտողին տեղափոխում է 1981 թուական, Փարիզ: Հայազգի Արամը պայթեցնում է թուրք դեսպանի մեքենան՝ ծանր վնասուածք պատճառելով ժիլին, որն անցնում էր իր հեծանիւով: Արամը փախչում է Պէյրուէթ՝ միանալու Հայ ազատագրական բանակին: Նրա մայրը՝ Անուշը, գնում է հիւանդանոց՝ ժիլին տեսնելու, եւ որդու համար ներողութիւն խնդրելու, բայց ժիլն ուզում էր դահճին դէմ առ դէմ հանդիպել: Մտքում վրէժ՝ նա ուղեւորում է Մարսել՝ Արամի ընտանիքի անդամների հետ ճակատելու, բայց այնտեղ երկարատեւ հիւրընկալութիւն է գտնում: Արամը Պէյրուէթում ընհարուում է ընկերների հետ, մինչեւ որ մի օր որոշում է հանդիպել իր գոհին՝ նրան իր ներկայացուցիչը դարձնելու մտադրութեամբ...»

Ֆիլմում նկարահանուել են Գրեգուար Լըպրենս-Ռենգեան, Արիան Ասկարիդը, Սիմոն Աբգարեանը, Սերժ Աւետիքեանը, Սայրուս Շահիդիին եւ այլք:

Ռոբեր Գեդիգեանն այս տարի գլխավորում է «Ոսկէ Միրան»ի «Միջազգային խաղարկային» մրցոյթի ժիւրին: Գեդիգեանն

Ռեժիսորի հենց այդ ֆիլմի ցուցադրութեամբ էլ մեկնարկեց Երեւանեան «Ոսկէ Միրան» միջազգային 12րդ կինոփառատոնը:

«Ֆիլմը կը ցուցադրուի սկանդինավեան եւ ասիական երկրներում, Սպանիայում, Իտալիայում, Քանադայում, Պելզիայում, Շուեյցարիայում, Յունաստանում, Իսրայէլում, Ինչպէս նաեւ Լատինական Ամերիկայում: Ֆիլմի հայկական կինովարձոյթը կախուած է «Մոսկովա» կինոթատրոնից, «Արմենպրէս»-ի փոխանցմամբ՝ նշեց Ռոբեր Գեդիգեանը:

Ռեժիսորի խօսքով՝ ինքը երկար ժամանակ ցանկացել է նկարահանել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ ֆիլմ: «Իրականում ցանկացել եմ նկարահանել ֆիլմ, որն ամփոփում է հայկական իրականութիւնը: Իհարկէ դժուար էր աշխատել սցենարի վրայ: Եղել են մի քանի տարբերակներ, սակայն վերջիվերջոյ եզրահանգել ենք այս տարբերակին», - նշեց Ռոբեր Գեդիգեանը:

Ֆրանսահայ կինոռեժիսորի խոսքով՝ ֆիլմում հայի պատ-

արդէն 35 տարի է՝ ստեղծագործում է կինոյի ասպարէզում եւ հաստատուն տեղ ունի իր սերնդի լաւագոյն ֆրանսիական կինոգործիչների շարքում: Նրա հեղինակած շուրջ երկու տասնեակ ֆիլմերը ամենատարբեր ժանրերի են՝ կատակերգութիւններ, տրամաներ, պատմական ֆիլմեր եւ այլն: Գեդիգեանի ֆիլմերը մշտապէս ընդգրկուում են եւրոպական հեղինակաւոր՝ Կաննի, Պելլինի, Սան Սեբաստեանի եւ այլ կինոփառատոնների մրցութեան ծրագրերում: Մի շարք ֆիլմերում Գեդիգե-

եանն անդրադարձել է հայկական թեմային: Այս տարուայ Կաննի կինոփառատոնի յատուկ ցուցադրութիւնների շարքում ընդգրկուել էր Գեդիգեանի «Խենթ պատմութիւն» խաղարկային կինոնկարը, որը բարձրաձայնեց Հայոց ցեղասպանութեան թեման այդ կարեւորագոյն կինոհարթակում: 2006 թուականին Գեդիգեանն իր «Ուղեւորութիւն դէպի Հայաստան» ֆիլմի համար արժանացել է «Ոսկէ Միրան» կինոփառատոնի «Արծաթէ Միրան» յատուկ մրցանակին:

ԳԻՐՔԵՐ

«ԻՍ ԵՐԳԵՐԸ» ՀԵՂԻՆԱԿ, ՄԱՅՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ԽԱԶԻԿ ՃԱՆՈՅՆԱՆ

Մայք Յակոբեանին ծանօթ եմ իր աշակերտութեան տարիքէն, Հ. Բ. Ը. Միութեան Պէջրութի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի սան եղած շրջանէն:

Բարեկիրթ, հպարտ, ինքնավստահ, կոկիկ պատանի մըն էր: Մեծերը յարգող, ընկերասէր եւ շրջանակին ծառայող եւ Հ.Բ.Ը.Միութեան մէջ աշխոյժ անդամ մըն էր:

Մայքին ծնողներն ալ շատ բարի ու կիրթ մարդիկ էին: Հայրը բարձրագոյն ուսում առած չըլլալով հանդերձ, ոտանաւորներ կը գրէր թրքերէն եւ հայերէն լեզուներով: Իսկ Մայքին մեծ հայրը՝ (մօրը հայրը) Աշուղ Խաչեր, ծանօթ աշուղ մըն էր. առանց իր ներկայութեան ու երգին, գիւղին մէջ ոչ հարսանիք եւ ոչ ալ ուրախ առիթ կ'ըլլար:

Այսպիսի արուեստասէր ծնողքէ եւ մեծ ծնողքէ սերած Մայքը, փոքր տարիքէն ինքն ալ տաղաչափեալ եւ արձակ գրութիւններ սկսած է գրել:

Յովակիմեան-Մանուկեան վարժարանի մէջ կը հրատարակուէր «Նուիրում» անունով գրական եռամսեայ կամ կիսամեայ, կոկիկ հրատարակութիւն մը: Հոն աշակերտներու գնահատանքի արժանի գրութիւններ լոյս կը տեսնէին: Խմբագիրն էր, հայերէն լեզուի սիրուած, մեծանուն ուսուցիչ, ողբացեալ Օննիկ Սարգիսեան:

Օր մը, Պրն. Սարգիսեան ուսուցչարանին մէջ Մայք Յակոբեանի մէկ գրութիւնը կարդաց: Մայքը հինգ մեծադիր էջեր (իրաքանչիւր տետրակի մը երկու էջերուն չափ է) շարագրութիւն մը գրած էր (գլուխէն ինկած մէկ թել մագի մասին): Պրն. Սարգիսեան, կարդալէ ետք, ըսաւ. «Կրնա՞ք երեւակայել ինչ տաղանդ է ասիկա, գրել հինգ մեծադիր էջեր մէկ թել մագի մասին, այն ալ այսքան գեղեցիկ, համով-հոտով, անխառն հայերէնով (առանց թրքերէն բառեր եւ արտայայտութիւններ գործածելու). ասիկա իրապէս տաղանդ է»: Այդ գրութիւնը լոյս տեսաւ «Նուիրում»ին մէջ: Անկէ անդին այլեւս Մայքը գրողներու շարքին դասուիլ սկսաւ, քանի որ իր մէկ գրութիւնը արդէն տպագրութեան արժանացաւ:

Մայքը արուեստի ուրիշ հետաքրքրութիւն մըն ալ ունէր — նկարչութիւնը: Հիմա երբ կը վերջիւնէ Յովակիմեան-Մանուկեանի ուսուցիչները, իրապէս կը հիանամ անոնց վրայ եւ կը խոնարհիմ իրենց յիշատակին առջեւ: Նկարչութեան ուսուցիչ Վազգէն Թիւթիւնճեանը, ինքնին մեծ արուեստագէտ մըն էր: Չեմ գիտեր ինչպէ՞ս, ի՞նչ կ'ընէր որ աշակերտները այնքան լրջութեամբ կ'առնէին գծագրութեան պահը: Նոյնն էր պարագան երգի ուսուցիչ՝ Մինաս Գանգրունիին, որ իրապէս երգարուեստի գիտելիքներու ովկիանոս մըն էր եւ աշակերտները մեծագոյն հաճոյքով կը հետեւէին իր եւ Վազգէն Թիւթիւնճեան դասերուն:

Այս երրորդութեան եւ յատկապէս հայերէնի լեզուի տիրաններէն բանաստեղծ Վահէ Վահեանի շունչին տակ մեծցած, վլխաւորութեամբ տնօրէն: Արա Թօփճեանի, Մայք Յակոբեանի գրելու ու մանաւանդ գծելու ձիրքերը մշակուեցան, ժամանակի ընթացքին իր մէջ



դրուած հոլանտերը աճեցան եւ ահա այս գիրքին մէջ կը տեսնենք անոնց պտուղները:

* * *

Գիրքին բովանդակութեան անցնելէ առջ, նախ յիշեմ այս գիրքին մասին հեղինակին տարօրինակ որոշումները. Այս ծախսալից հատորը տպուած է սահմանափակ թիւով. ծախու չէ, այլ հեղինակը որպէս նուէր կուտայ մօտիկ բարեկամներու: Այս գիրքը տպուած է իր դրամով, առանց ոեւէ մէկուն օժանդակութեան: Իսկ մենք գիտենք որ Մայք մեծահարուստ մը չէ...

Ինչպէս ըսինք, գիրքը ծախու չըլլալով, հեղինակը կը մերժէ ուղղակի կամ անուղղակի նուէր մը ստանալ կամ հաստատութեան մը նուիրել այդ գումարը:

Հեղինակը կը մերժէ այս գիրքին գինձօնը ընել:

Հեղինակը այս գիրքը կը նկատէ համեան մէկ հրատարակութիւն, հետեւաբար անոր մասին գրախօսական բերելն ալ իր համեստութիւնը կը վիրաւորէ: (Այսուհանդերձ, մեր այս գրութիւնը հակառակ իր ցանկութեան գրուած է եւ գրախօսական մը չէ, այլ ողջունագիր մը):

Մայք Յակոբեան կը կարծէ, որ այս գիրքին մէջ դրուած նկարներով եւ բանաստեղծութիւններով բնաւ յակասութիւն չունի նկարիչի կամ մեծ գրողի մը հովերը առնելու: Իսկ մեր կարծիքով, այս գիրքին մէջ գնահատանքի արժանի քանի մը առանձնայատկութիւններ կան:

Արդարեւ, «Իմ երգերը» խորագիրը կրող այս հատորը գոնեակեղ, շատ որակաւոր տպագրութեամբ եւ արուեստի բարձր մակարդակով զարդարուած էջերով պատրաստուած 130 էջոց գիրք մըն է: Որպէս նախաբան, «Նոր Հայաստան»ի աշխատակից՝ Սարգիս Մաճառեան, նախ պատշաճ ձեւով կը ներկայացնէ հատորը, ապա հարցազրոյցով մը՝ հեղինակը:

Կլենտէյլի «Երեւան» տպարանէն լոյս տեսած այս ճաշակաւոր գրքին մէջ գետեղուած են հեղինակին երգերուն բառերն ու գեղատեսիլ, առիւնքնող նկարները:

Եթէ նկատի ունենանք, որ Մայք Յակոբեան թէ գրելը, թէ նկարելը եւ թէ երաժշտութիւնը, առանց արհեստավարժ դպրոցներ յաճախելու՝ ինքնուս գարգացուցած է այդ տաղանդները, իրապէս գնահատելի են:

Ինչպէս նկարչութեան մէջ, իր բանաստեղծութեան նիւթերն են բնութիւնը, մարդը, մարդկային յարաբերութիւնը, մայր հայրենի-

ՍՈՌԱՑԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՆԵՐՈՒՄ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Օրեր մտքիցս էլք հեռանում հարագատիս այցելելու ցանկութիւնը, որը գտնուում էր մեծահասակների Nursing Home-ում, սպասում էր յարմար առիթի, դե՛հ, հարագատութիւնը ջերմ պահելու համար պէտք է որ իրար այցելել, շփուել եւ յարաբերուել:

Յունիսեան հինգշաբթի օր էր, առիթ էր ընձեռուել ցանկութիւնս իրականացնելու համար, ճանապարհ ընկայ դէպի Գլենդէլու՞մ գտնուող այդ ինսամակալութիւնը:

Այդ օրը՝ արեւոտ տաք օր էր, ճամբիս խանութ մտայ հիւանդին յարմար բան գնելու, անշուշտ յարմար չնկատեցի դատարկ ձեռքով այցելութեան գնալ: Նրա մուտքից ներս մտնելով տեղեկատուութեան սեղանից խնդրեցի Ա. անունով հիւանդի սենեակը, մատնացոյց արուեց ձախ միջանցքում գտնուող սենեակը ավելացնելով.

-Յիշեալ անձը օրուայ երկար ժամերը քայլելով է անցնում միջանցքներում, փորձէք իրեն այնտեղերում գտնել:

Շնորհակալութիւն յայտնելով ուղղուեցի դիմացս երեւացող երկար միջանցքը՝ լոյսերով ողողուած: Նա հեռու ազգականս է, միշտ իրեն սիրել եւ յարգել եմ, ինք եւս բոլորի նկատմամբ շատ ջերմ եւ սիրալիք է եղել: Նրան հանդիպեցի միջանցքում քայլելիս, ջերմօրէն բարեւեցի, ողջագուրուեցի, բայց նա անտարբերութեամբ ինձ ընդունեց, այդուհանդերձ իրեն դիմելով ասացի.

-Հօրաքոյր ջան, էս ինչ վիճակ է, ինչո՞ւ են քեզ բերել այստեղ, ի՞նչ է պատահել քեզ հետ, դու հօ առողջ էիր եւ յիշողութիւնդ գովելի:

Այս իմ հարցերի ընթացքում նա անբնական ծիծաղկոտ հայեացքը յառած դէմքիս անպատասխան՝ կարծես թէ գննում էր իմ ով լինելը, ճի՞գ էր թափում յիշելու, սակայն ենթագիտակցութիւնը անգոր էր, էջր ստացում, ապա դառնալով ինձ, թէ՛

-Դու ո՞վ ես, չեմ ճանաչում քեզ, ի՞նչ ես ուզում:

Յուզուեցի, ուրեմն ճիշտ էին ինձ փոխանցել, հօրաքոյրը մոռացկանութեան ճիրաններում շատ շատերի չի ճանաչում, կարեւորութիւն չտալով նրա ասածին շարունակեցի լրագրողի պէս հարցախոյզ լինել եւ ինձ ներկայացնելով.

-Հօրաքոյր ջան, ինչպէս թէ ինձ չես ճանաչում, չես յիշում, Թեհրանից որ նոր էիր եկել քեզ այցելում էի եւ երկար գրոյց էինք անում, հիւրասիրում էիր, անցեալն էինք մտաբերում՝ հարագատութեան կապուղ իրադարձութիւններից տեղեկանում:

Նախկին քաջառողջ, տեսքով ու կազմուածքով հօրաքոյրը էջր, բաւական նիհարել էր, դէմքին կնճիռներ էին երեւացել, խոշոր աչքերի պայծառութիւնը խամրել էր, գլխափունջ մագերը լրիւ ճերմակել: Նա դիմացս կանգնած թէ՛ շուարած եւ թէ՛ անտարբեր ու անհամբեր ժպիտը երեսին ինձ էր նայում անլուր շրթոնքները, գլուխը եւ մարմինը թեթեւակի շարժելով, այս բոլոր խօսքերից եւ յիշատակութիւններից յետոյ թէ՛

-Չէ՛, նա՛, չեմ ճանաչում քեզ ասելով, նա ճամբայ ընկաւ:

Կարեւորութիւն չտալով ասածին նրան հետեւեցի միջանցքում, նա առջեւից, իսկ ես նրա յետեւից,

հասնելով սպասարանին ձեռքը բռնելով նստեցրեցի բազկաթոռին, շատ ջանացի, որ նրա յիշողութիւնը մասամբ վերականգնել, սակայն անարդիւնք...

Այս ինչ տեսակ անպիտան հիւանդութիւն է, որ հետզհետէ տարածուած է մեծահասակների մօտ: Բժիշկների խորհուրդն այն է, որ թարմ բանջարեղէնի, ձկնեղէնի եւ այլն անուղղը, մտային աշխատանքը, զբաղմունքը եւ ի մասնաւորի ընթերցանութիւնը մեծապէս օգտակար են կանխելու այս տեսակ հիւանդութեան:

Ի տես սենեակներում հիւանդների տեղումս նստած մտքերի մէջ էի ընկել, թէ ինչպէ՞ս կարելի է՝ Աստուած իր արարածների մէջ խտրութիւն դնի, շատ-շատեր խոր տարիքում ապրում են առողջ եւ առանց ցաւերի հրաժեշտ են տալիս կեանքին, իսկ շատեր տանջուելով են իրենց հոգին ավանդում կամ երիտասարդ տարիքում կեանքի դառն ու քաղցր չճաշակած մահանում են խոր ցաւ ու վիշտ պատճառելով շրջապատին, արդե֞ք ինչին պիտի վերագրել այս բոլորը, ճակատագրի՞ն, Նախաինամութեան անքննելի տնօրէնութեա՞ն, թէ՛ մարդու ոչ մտածուած ապրելակերպ գիտակցութեա՞ն, որ մէկի՞ն...

Անմիջապէս չթողի տեղավայրը, հետաքրքրութեան համար մտայ այն սրահը, ուր բուժքոյրերը եւ հիւանդապահները զբաղուած էին մի շարք հիւանդների հետ հեռուստացոյցը միացրած, մէկ մասը սայլակների վրայ, ուրիշներ սեղանների շուրջը աթոռներին նստած: Տարբեր ազգի լուռ ու մունջ հիւանդներ, որոնց մէջ նկատեցի հայեր: Մտեցայ սայլակներից մէկին, որ հայ տղամարդ էր բարձրատարիք, տխուր ու թախճոտ դէմքով մտքերի մէջ խորասուզուած, բարեւեցի իրեն ասելով.

-Բարեւ հօպար, ինչպէ՞ս է քո թանկագին առողջութիւնը.

Նա զարմացած գլուխը բարձրացրեց, տեսնի ո՞վ է իրեն հարցնողը, ապա բարեւս առնելով պատասխանեց.

-Վատ չեմ, կարճ ու կտրուկ պատասխան:

-Ո՞ր երկրից էք:

-Իրանից:

Նա համեստօրէն իրեն ներկայացրեց, ճանաչեցի, մեր թաղի հարեւանութեան էր ապրում Թեհրանում, արհեստանոց ունէր: Զարմացել էի նրա առողջ եւ տրամաբանուած պատասխաններից եւ մեր միջեւ գրոյցից: Նա ոչ իննսուսին մօտիկ տարիք ունէր, դիմելով իրեն հարց տուի.

-Հօպար՛ր, քեզ ինչո՞ւ են բերել այստեղ.

-Ես ինչ իմանամ, ո՞ւր (ինչու) են բերել:

-Որեւէ հիւանդութիւն ունե՞ս:

-Չէ՛, վալլահ (էն Աստուածը):

-Ո՞վքեր են բերել:

-Կինս եւ տղաներս, սիրուն մեր բնակարանում ապրում էի, վերցրել, բերել են էստեղ

-Ինչո՞ւ են քեզ սայլակին նստեցրել:

-Ոտքերիցս մի քիչ նեղանում եմ:

Նա խօսում էր հանդարտ առանց մտքի եւ գաղափարի սխալ թոյլ տալով՝ երբ Ամերիկա գալը, ընտանեկան կազմի եւ գործի մահանումը, իսկ ես նրա յետեւից,

ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ (12)

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ ՎԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

«Ծովից Արեւմ է ելել ու պարել է ժայռերին
Եւ այդ պարից է ծնուել Մայրաբաղաբ Վանը հինն»:

Շատ դժուար է ինձի համար հոս նկարագրել Վանայ Լճի եւ շրջակայքի գեղեցկու-թիւնը: Մե՛րն էր: Հիմա, առժամեայ կերպով մերը չէ: «Վաղը», մե՛րը պիտի ըլլայ...:

Դէպի Վան մեր ճամբուն վրայ հանդիպեցանք Առիւծ Մհերի թոռան, Փոքր Մհերին...: «Մհերի Դուռ»-ի շրջակայքը ժայռալեռ մըն է, ուղղակի ժայռաստան, որուն վրայ յատկորէն կ'երեւայ «Մհերի Դուռ»-ը: Դրան վրայ սեպագիր արձանագրութիւններ կային, մասամբ վանտալուած, ուր արձանագրուած է հին ժամանակներուն դարերով կիրառուած արեգակնաչին օրացոյցի վկայութիւնը: Տիգրան եւ Պերճ Դորդորեանները, որպէս խումբին ամենաերիտասարդ անդամները, մագլցեցան մինչեւ «Մհերի Դուռ»-ը, մեր պատգամը տանելու: Տիգրանը իր հուժկու բազուկներով թակեց «Դուռ»-ը, բայց բացող չ'եղաւ... Պիտի խնդրէինք Փոքր Մհերէն որ Մեծ Յեղասպանութեան 100-ամեակի առիթով դուրս գար եւ ազատագրէր Մեր Հողերը, իր գերեզմարուած հայրենիքը: Ինչպէս իր հայրը, Դաւիթը, Մարա Մելիքին գործեր դուրս չպրտած էր մեր հողերէն, պիտի առաջարկէինք որ ինքն ալ դուրս գար եւ դուրս չպրտէր Օսման օղլութիւնը գազաններուն վտնականները: Լուռ էր Փոքր Մհերը, տակաւին մտածկոտ, կարծես մեզի կ'ըսէր. « ժամանակա չէ եկած տակաւին,

քելեանին որ տանի իր եկեղեցին եւ հոն խորանին վրայ գետեղէ: Սիրով ընդունեց առաջարկս:

«Մհերի Դուռ»-ին հրաժեշտ տալէն ետք այցելեցինք Ուրարտական բերդ մը, կառուցուած բարձր բլուրի մը գագաթին՝ որ «կ'իշխէր» շրջակայքին վրայ: Թուրք կամ քիւրտ Ուրարտագէտ մը մեզ դիմաւորեց: Այս մարդուկը տասնամեակներ առաջ որպէս «բեռնակիր» աշխատած է եղեր Եւրոպացի հնագէտներու հետ, պեղումներու ժամանակ եւ անոնցմէ սորված Ուրարտական պատմութիւնն ու սեպագիր այբուբենը եւ այժմ Ուրարտագէտ է, մասնաւոր Ուրարտական սեպագիրներուն մասնագէտ: Ան մեզի բացատրեց թէ ինչպէս ժամանակին Ուրարտացիները ժայռափոր խողովակներով անձրեւնեւորու ջուրերը կ'ամբարէին մասնաւոր ժայռափոր ջրամբարներու մէջ: Նոյնպէս տեսանք գետնի մէջ պահուած մեծ կարաններ՝ ցորեն ամբարելու համար: Մեղգոնեանցի Տօքթ. Պերճ Դորդորեանը պահակին ձեռքը քանի մը թրքական ոսկի սահեցնելով անոր Ուրարտական սեպագիր տառերով իր անուն մակնունը եւ «Մեղգոնեան» բառերը գրել տուաւ: Մեղգոնեանցիներուս համար, Մեղգոնեան կրթական Հաստատութիւնը սրբատեղի է, իսկ Աղա Կարապետ եւ Աղա Գրիգոր Մեղգոնեան եղբայրները՝ հազարաւոր որբերու փրկիչ եւ արեւմտահայերէնի պահպանիչ Սուրբեր: Վերջապէս հասանք Վանայ Լիւծ:

Արեւուն ճառագայթները բերւորաւոր աղամաններու նման կը փայլիլէին Լճի ալեակներուն վրայ: Լճեզրերին, նախքան նաւ հասնիլը զբօսաշրջիկներու համար կրպակ-



Համիտը խնդրեց որ իր ճերմակ, Վանի կատուն ալ արտօնուի իր հետ Սելանիկ երթալու: Ան ալ արտօնուեցաւ: Սուլթանին Վանեցի կատուն մասնաւոր խնամուած ազնուական սերունդէ կը սերեր: Անոր հասակը կ'ըսեն թէ քանի մը ոտք երկարութիւն ունէր: Վերջապէս Օսմանեան Կայսրութեան Սուլթանին կատուն պարզ կատու մը պիտի չ'ըլլար:

Զբօսանալով ճամբայ ելանք դէպի Աղթամար կղզին: Մինչ կը մօտենայինք կղզիին (3.5 քմ), սկսայ պատկերացնել թէ ինչպէս 4-րդ դարուն Ռշտունեաց իշխանները զարդարուած նաւերով կղզի կ'երթային իրենց սիրուհիներուն հանդիպելու...: Ապա, 10-րդ դարուն, հայոց Գագիկ Արծրունի թագաւորը կղզիին ամենաբարձր վայրին վրայ կառուցած էր պարսպապատ իր միջնաբերդը իր թագուհիին ապահով հանգստարան մը պարգեւելու համար: Եւ որպէսզի թագուհին շրջագրեւոր չ'թրջուէր, կառուցել տուած է 2.6 մետր բարձրութեամբ նաւամատոցը, որ այժմ ջուրով ծածկուած է: Նախքան կղզի ելլելը, նախ ընդհանուր պտոյտ մը կատարեցինք կղզիին շուրջը: Հարիւրաւոր ծովային թռչուններ (gull) ժայռափոր իրենց բոցներէն վար սուզուելով մեր շուրջ պար կը բռնէին եւ կ'ողունէին մեր գալուստը...: Կրնայինք պատկերացնել թէ կղզիին բնակիչները ու՞ր ձկնորսութեան կ'երթային, կտրիճները ո՞ր բարձունքներէն վար կը սուզուէին աղջիկներուն ուշադրութիւնը գրաւելու, թէ ինչպէ՞ս զբօսանաւորով հայ աւազանին կը նաւարկէր կղզիին շուրջ: Վստահաբար կղզիին բնակիչները լճափ լողալու ալ կու գային, եւ թէ ինչպէս մինչ աղջիկներուն «ծովագրաստները» (մայօ) կը փակչէին անոնց սրունքներուն, ի՞նչ փոթորկումներ տեղի կ'ունենային մօտակայ տղոց հոգիներուն մէջ...

(ախու ըլլալէն շատ աւելի լաւ է): Ըսուեցաւ որ չենք կրնար «թանգարան»-ին մէջ աղօթել կամ նկարել: Հա՛հ-հա՛: Եկեղեցիին մէջ կային նաեւ Հայաստանէն ժամանած ուրիշ զբօսաշրջիկներ: Երբ մեր խումբին մեծամասնութիւնը ներս մտաւ, Դոկտ. Կարպիսին ըսինք որ մենք պիտի աղօթենք: Մենք 1915-ի գառնուկները չենք: Դոկտ. Կարպիսը արդէն նման առիթներու կը սպասէր Աստուծոյ հետ խօսելու: Կանչեցինք Երէցկիւն Սանտրա Առաքելեանը եւ «Հայր Մեր»-ը, «Տէր Ողորմեայ»-ն եւ «Սուրբ Սուրբ»-ը խնկարկեցինք: Մեզի միացան Հայաստանցի զբօսաշրջիկները: Գէորգ Յակոբեանը, միշտ նման առիթներուն «երկրորդ» ձայնը կը բռնէր: Ան Մեղգոնեանի մէջ երգչախումբի անդամ էր (պաս) աշակերտութեան եւ յետոյ ուսուցչական տարիներուն (Մալխաթո Սեպուհ Աբգարեանի հետ): Հոս ալ Գէորգը երկրորդ ձայով աւելի գեղեցկացուց մեր աղօթքները: Թուրք պահակը եկաւ եւ շատ անհանգիստ էր եւ բարկացած որ «օրէնքը խախտած էինք»: Դոկտ. Կարպիսը «ձեռնուեցաւ» պահակին հետ, պահակը իր ձեռքը գրպանը տարաւ եւ «ժամանակաւորապէս խլացաւ ու կուրացաւ» եւ մեր «ապօրինի նկարահանումներ»-ն ալ չտեսաւ:

Սբ. Խաչ եկեղեցին կրնար նմանիլ որեւէ այլ հայկական եկեղեցիի, եթէ իր դուրսի պատերուն վրայի քանդակները չ'ըլլային: Գիտէք անշուշտ որ եկեղեցուց դուրսի պատերուն վրայ Սբ. Գիրքէն դրուազներ քանդակուած են:

Հայաստան ուսանած Մեղգոնեանցի ճարտարապետ Տիգրան Դորդորեանը բացատրեց մեզի որ որմնաքանդակները կը բաժնուէին հորիզոնական վեց գօտիներու:

Առաջին գօտին տերեւներով զարդաքանդակներ էին, որոնք ժապաւէնի նման փաթթուած էին եկեղեցիին շուրջը: Անոնք բուսական աշխարհի պատկերներով, ալիքաձեւ շուրջպար բռնած էին եւ վեր կը «պահէին» միւս գօտիները: Երկրորդ գօտին կը նկարագրէր Հին եւ Նոր Կտակարաններէն տեսարաններ, ինչպէս Ադամ եւ Եւան, Աբրահամն ու Իսահակը զոհաբերութեան սեղանին առջեւ, Յովնանի ծով նետուիլը, Դանիէլ Մարգարէն առիւծներու գութին մէջ, Տալիթային Սամսոնին մագլցող կտրելու պահը, Դաւիթի եւ Գողիթի մենամարտը, չարին դէմ կռուող ասպետները, եւ այլն: Գլխաւոր քանդակներէն մին ալ Գագիկ թագաւորի քանդակն է որ ան եկեղեցուց մանրակերտը ցոյց կու տայ կամ կը նուիրէ Յիսուսին: Երրորդ գօտիին մէջ կը տեսնենք բազմաթիւ կենդանիներ,



սպասեցէք քիչ մըն ալ եւ ես բերւաւոր Փոքրիկ Մհերիկներով պիտի փշրեմ այս Դուռը եւ այն ատեն վա՛յ անոր որ դէմս կ'ելլէ... (կը լսէ՞ք Պրն. էրտողան):

Տիգրանը տակաւին կը համեմար մինչ իր կինը, Քէթին, վարէն աղաչական կը կանչէր իր ամուսնոյն որ ուշադիր ըլլար վար իջած ատեն քանի որ վայրէջքը քարքարոտ էր եւ կրնար սահիլ: Տիգրանն ալ, կարծես անոր վախցնելու համար մասնաւոր կը «սահէր» խեղճ Քէթիին սիրտը թունդ հանելով: Պաս չեկած, քանի մը կտոր քար առինք որպէս յիշատակ «Մհերի Դուռ»-էն, եւ ի պահանջեալ հարկին՝ քանի մը գլուխ արիւնեղու...: Ճերմակորակ քար մըն ալ տուի Ֆաուլըրի (Ֆրէզնոյի կից քաղաք) եկեղեցուց Երէցկիւն Սանտրա Առա-

ներ կային, ուր ծախու էին բազմաթիւ յուշանուէրներ, պատկերներ, քարտէզներ եւ ուտեստեղէններ: Քիչ մը անդին մեծադիր նկարներ կային Աղթամար կղզին նկարագրող: Հոն շրջանակուած էր նաեւ Վանի նշանաւոր ճերմակ կատուին մեծակակ պատկերը իր երկու գոյն աչքերով:

Երբ Սուլթան Համիտ Բ. գահնկէց եղաւ, յեղափոխականները զինք Սելանիկ չ'աքսորած, իրաւունք տուին իրեն իր հետ տանելու իր պալատական ծառաներէն 24 հոգի: Սուլթանը իր ընտրութիւնները կատարելէն ետք խնդրեց որ իրեն արտօնութիւն տրուի մէկ հոգի եւս աւելցնելու: Երիտասարդ թուրքերը համաձայնեցան: Սուլթանը իր սրճեփն ալ առաւ իր ցանկին վրայ: Ապա, արիւնարբու

Աղթամար կղզին էր նաեւ հոգեւոր եւ մշակութային շարժումներու կեդրոն:

Ելանք կղզի եւ ուղղակի ուղուեցանք դէպի 2009-ին վերանորոգուած Սբ. Խաչ եկեղեցին:

Սբ. Խաչ եկեղեցին կառուցուած է Գագիկ Արծրունի (608-943) թագաւորին հրամանով եւ յղացմամբ՝ ճարտարապետ - քանդակագործ Մանուէլ Եպիսկոպոսի կողմէ:

Փոքր եկեղեցի մըն է, խաչաձեւ, 15 x 20 մեթր մեծութեամբ, մայր գմբեթը՝ 20 մետր բարձրութեամբ, ներքնամասը՝ սրբապատկերներով զարդարուած: Թուրք պահակին իմացանք որ տարին միայն մէկ օր պատարագ կը մատուցուի հոս, իսկ մնացած 364 օր եւ 8 ժամերը ան թանգարան է

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻԱՆՈՒՄ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՇԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՓՐԿԵԼՈՒ ԵՆՈՒՆԵՍԿՕ-Ի ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆԸ



Լ.ԻՍՆԱ ԵՂԻՍՋԱՐԵԱՆ

Հայկական յայտնի քոչարին հնարաւոր է համալրի ԵՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկը: Յայտն արդէն ներկայացուած է, կը քննարկուի այս տարեվերջին: Նոր անելիքներ էլ կան, բայց նոր յայտեր՝ դեռ ոչ, այսօր Երեւանում՝ Մատենադարանում, ընթացող «Մշակութային քաղաքականութիւն, քաղաքականութիւն մշակութի համար» խորագրով միջազգային համաժողովի ժամանակ լրագրողներին տեղեկացրել է Հայաստանի ԵՈՒՆԵՍԿՕ-ի ազգային յանձնաժողովի գլխաւոր քարտուղար Վահրամ Կաթոյանը: ԵՈՒՆԵՍԿՕ-ի ազգային յանձնաժողովի նախագահ, արտաքին գործերի նախարար՝ Էդուարդ Նալբանդեանն իր հերթին յայտարարել է՝ Հայաստանը միանում է համաշխարհային մշակութային ժառանգութիւնը փրկելու՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնութեանը:

«21-րդ դարում յուշարձանների պահպանութեան հարցում «փրկեցէք»-ն ամենաարդի արտայայտութիւնն է դարձել, շեշտում է ՀՀ մշակութի նախարար՝ Յասմիկ Պողոսեանը: ԵՈՒՆԵՍԿՕ-ն միջազգային խոշորագոյն միակ կառույց է, որն իր ամենօրեայ պաշտպանութեան տակ է վերցրել մշակութային խնդիրները, մշակութային ժառանգութեան պահպանման հարցը», - շարունակեց Պողոսեանը Երեւանում՝ Մատենադարանում, ընթացող «Մշակութային քաղաքականութիւն, քաղաքականութիւն մշակութի համար. մշակութի դերը «Ետ-2015 զարգացման օրակարգում» խորագրով միջազգային համաժողովի ժամանակ:

Հայաստանը մշակութային 7 կոնվենցիաներից 5-ի անդամ է, եւ այս 3 օրերին քննարկման օրակարգում են նաեւ տարածաշրջանում պատմամշակութային ժառանգութեան պահպանման լրջագոյն խնդիրները՝ նշուած կոնվենցիաների կիրառման դժուարութիւններով: 2015-ից յետոյ մշակութային քաղաքականութիւնն ինչպիսին է լինելու աշխարհում. համաժողովի աւարտին պէտք է մէկտեղուեն տեսակէտերը:

Աշխարհում այսօր աւերում են մշակութային խիստ արժէքա-

ւոր կոթողներ, եւ աւերողները մշակութային կոնվենցիաների մասին անգամ չեն էլ մտածում, օրինակ՝ մեր հարեւան երկրները՝ հայկական ժառանգութիւնը ոչնչացնելով: Մշակութի նախարար Յասմիկ Պողոսեանը պատժամիջոցներ կիրառման անհրաժեշտութիւնն է փաստում՝ սրա խնդրայարոյց լինելն էլ շեշտելով:

ԵՈՒՆԵՍԿՕ-ի ազգային յանձնաժողովի նախագահ, արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանը նախ շեշտեց՝ համաժողովը նուիրուած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրման 70-ամեակին: 7 տասնամեակի ձեռքբերումներն ու խնդիրներն այսօր են ամփոփում: Մշակութային ժառանգութեան ու քաղաքակրթութեան պահպանումն այսօր աշխարհում քաղաքական, կրօնական ու ազգային ատելութեան հարց է դարձել, նկատեց Նալբանդեանն ու ասուածը հաւաստող օրինակներին անցաւ:

«Ցաւօք, պատմութեան ընթացքում տարատեսակ աւերիչ բռնութիւնները բնաջնջել են քաղաքակրթութիւններ, ոչնչացրել, արմատախիւ արել մշակութիւնը իրենց բնօրրաններից: 21-րդ դարում աշխարհի տարբեր տարածաշրջաններում մշակութային արժէքների նկատմամբ վայրագութիւնները, ինչպիսին են, օրինակ, Աֆղանստանում 2001 թուականին Բուդդայի արձանների, Նախիջեւանում ատրպէյճանական բանակի կողմից Ջուղայի հայկական խաչքարերի, մի քանի շաբաթ առաջ սիրիական քաղաք Պալմիրայում 2000-ամեայ պատմութիւն ունեցող յուշարձանների ոչնչացումը, վկայում են, որ կրօնական եւ ազգային ատելութեան դրսեւորումները հաւասարապէս ուղղուած են մշակութային արժէքների դէմ: Այսօր Մերձաւոր Արեւելքում վտանգի տակ են յայտնուել այնպիսի մշակութային կոթողներ, որոնք պահպանուել են հազարամեակներ շարունակ: Այլոց քաղաքակրթութեանը պատկանող արժէքների հանդէպ անհանդուրժողականութիւնը, մշակութային կամ կրօնական ժառանգութեան վնասումը, աւերումը պէտք է վճռականորէն դատաւարտուեն միջազգային հանրութեան կողմից», - նշում է ԱԳ նախարարը:

Իրաքում եւ Սիրիայում տեղի ունեցող իրադարձութիւններին

լուրջ մտահոգութեամբ հետեւելով՝ Հայաստանն իր աջակցութիւնն է յայտնում «Միացիր յառու ժառանգութեան» ԵՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնութեանը՝ մշակութային վանդալիզմի յետագայ դրսեւորումները կանխարգելելու նպատակով:

Թեմայի բերումով արտգործնախարարը հասաւ մինչեւ Հայոց ցեղասպանութեան խնդրին, երբ մշակութային գործիչների ձերբակալութեանն ու բնաջնջմանը հետեւեց հազարամեակների պատմութիւն ունեցող հայկական մշակութային ներուժի ոչնչացման փորձը: Յաւալի է, որ 100-րդ տարելիցին մենք ականատես եղանք ահաբեկիչների կողմից սիրիական Տէյր Զօր քաղաքի Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցու աւերմանը, որը Հայոց ցեղասպանութեան նահատակների մատուցներն ամփոփող սրբատեղի էր: «Սա, միեւնոյն ժամանակ, խորհրդանշական կապի վկայութիւն է մարդկութեան դէմ անցեալում եւ այսօր գործած յանցագործութիւնների միջեւ: Ինչպէս հարկը տարի առաջ, այնպէս էլ այսօր ատելութեան եւ անհանդուրժողականութեան ուժերն իրենց նպատակին հասնելու ճանապարհին առաջին հարուածն ուղղում են հենց մշակութային արժէքների վրայ, քանզի մշակութիւնը սերունդների միջեւ կամրջող օղակ է հանդիսանում»:

Մշակութիւնների եւ կրօնների խաչմերուկում գտնուող Հայաստանը մշակութային համաժողովն անցկացնում է Մատենադարանում, որտեղ պահպանուել են ոչ միայն հայերէն, այլեւ արաբատառ եւ այլ լեզուներով ձեռագրեր: Եւօրեայ կոնֆերանսին մասնակցում են պատուիրակներ 45 երկրից եւ մի-

ջազգային կազմակերպութիւններից: Այն աշխատանքները կ'աւարտի հռչակագրի ընդունմամբ՝ համահունչ ԵՈՒՆԵՍԿՕ-ի սկզբունքներին:

Եւ՝ հայկական մշակութային արժէքների արժեւորման մասին: Հայկական յայտնի քոչարին հնարաւոր է համալրի ԵՈՒՆԵՍԿՕ-ի՝ մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկը: ԵՈՒՆԵՍԿՕ-ի ազգային յանձնաժողովի գլխաւոր քարտուղար Վահրամ Կաթոյանի տեղեկացմամբ՝ Հայկական լեռնաշխարհում ամենատարածուած եւ ներկայում ամենապահպանուած հայկական պարզ ցուցակում ընդգրկելու յայտն արդէն ներկայացուած է: Պարզ կը լինի տարեվերջին:

Յաջորդ տարիների համար էլ կան ծրագրեր, սակայն դեռեւս ներկայացուած յայտեր չկան: Յիշեցնենք, որ ԵՈՒՆԵՍԿՕ-ի մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ներկայացուցչական ցանկում արդէն ներառուած է Հայաստանի կողմից ներկայացուած չորս մշակութային արժէք՝ «Դուրուկն ու իր երաժշտութիւնը», «Խաչքարի արուեստ. խորհուրդն ու խաչքարագործութիւնը», «Սասնայ ծռեր» կամ «Սասունցի Դաւիթ» էպոսը, «Լաւաշ. աւանդական հացի պատրաստումը, նշանակութիւնը եւ մշակութային դրսեւորումները Հայաստանում»:

ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգութեան ցանկում ցայսօր Հայաստանից ընդգրկուած են Հաղպատի եւ Սանահինի վանական համալիրները, Գեղարդավանքը Ազատ գետի հովտով, էջմիածնի եկեղեցիներն ու Մայր տաճարը, նաեւ Զուարթնոց հնավայրը:

«ԻՍ ԵՐԳԵՐԸ» ԶԵՂԻՆԱԿ, ՄԱՅՔ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

քին ու հայ մշակոյթին ու լեզուին նուիրուած սրտառուչ երգերը եւ վերջապէս սիրոյ նուիրուած կտորներ, սիրոյ քաղցր ապրումներ...: Նկարները՝ մէկը միւսէն գեղեցիկ, կարծէք տարիներու փորձառութեամբ հասունցած նկարիչ մը ըլլար, հակառակ անոր որ այդ գրութիւններէն եւ նկարներէն ոմանք եւ արտակարգօրէն յաջող գործերը գծած կամ գրած է երիտասարդական շատ կանուխ տարիքին: Յետագային ան սկսած է անգլերէն ալ գրել (Live Your Day), (Victims of the World), (You Never Know), որոնք գրած է, ինչպէս ըսինք, երիտասարդական շատ վաղ տարիներուն (20-21 տարեկանին):

Իւրաքանչիւր նկարի հետ գեղեցկօրէն կցած է իր մէկ բանաստեղծութիւնը:

Մայքին երգերէն ոմանք («Իմ անուշ եար», «Քեզ չեմ ներիր»), («Պէտք է գնալ Երեւան», եւ այլն), յօրինուած են նոյնինքն Մայքի եւ

իր դասընկեր՝ Յարութիւն Սարգոյեանի կողմէ

Նկարներուն մէջ Լիբանանի, Հայաստանի եւ այլ երկիրներու բնական տեսարաններ, վարպետ վրձինահարումով, գեղեցիկ գործերու վերածած է:

Զերմօրէն կը շնորհաւորեմ Մայք Յակոբեանը այս գեղեցիկ հատորին համար եւ հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնեմ իրեն՝ ինծի դրկած եւ մակագրուած հատորին համար:

Երիտասարդական աւելնով, նուիրումով ու եռանդով օժտուած Մայքը իրաւունք չունի չգրելու, չնկարելու, չերգելու եւ չարարելու. ասիակ մեղանչում մը պիտի ըլլայ բնութեան եւ Աստուծոյ դէմ, որոնք բազում տաղանդներով օժտած են զինք:

Գրիչդ, վրձինդ դալար եւ անսպառ ըլլան, սիրելի Մայք:

Մայքի նկարչական գործերուն ծանօթանալու համար կրնաք այցելել համացանցի հետեւեալ կայքէջին՝ <http://www.mikodot.com>:

ՄՈՌԱՑԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՆԵՐՈՒՄ

Շարունակուած էջ 14-էն

սին երկար գրուցեցինք, նա կասեց իր գրում իստեղծ, կեանքի պատմութիւնն անելու: Զգում էի հաճելի պահեր են իր համար եւ չզլացայ երկար մնալ մօտը: Ահա մէկն այսպէս, այն մէկն էլ այնպէս: Ուր էլ գնանք, ուր էլ լինենք, սա է կեանքը իր տարբեր երեւներով:

Այդ հայ մարդու առողջ վիճակը ինձ մտածմունքի մէջ ձգեց,

ինչո՞ւ էին նրան բերել այստեղ, չէ որ առողջ եւ յուշը տեղումն էր եւ դժգոհ իրեն այդտեղ բերելու համար: Եթէ չսխալուեմ մի հայկական առած կայ, որ ասում է՝ այն տնում, որ մեծ չկայ, մեծ քար են բերում դնում սենեակում որպէս ծնողի ներկայութիւն: Մտողները տան սիւններն են, որոնց նկատմամբ մեր անսակարկ յարգանքն ու պատիւը անհրաժեշտ է ընտանիքի առողջ գոյատեւման համար:

ՄԱՐՈՒՍԸ

ՌԻՏԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Շարունակում Եմ Երկրորդ թիվին)

Յաջորդ ալյուրները Մարուսը չէր ուշացրել: Նա ներկայացել էր աւելի զարդարուն եւ աւելի առոյգ ու մտերմիկ ջանքերով: Միջանցքում տանտիրուհու հետ ողջագուրուելուց յետոյ, նա անմիջապէս անցել էր դէպի մեծ սենեակն ու, այնպէս ազատ ինչպէս կը զգար իրենց տանը, տեղաւորուել խորունկ բազմոցի մէջ յարմար դիրքով եւ առանց ուշացնելու՝ սկսել իր համար կարեւոր նիւթից, մինչ տիրուհին դեռ ոտքի՝ որոշում էր, թէ որտեղ նստէր:

-Աղջիկներս մեծացել են եւ արդէն ուրիշ հարցեր են առաջացել... որոշել եմ նրանց ամուսնացնել... կարծես ժամանակն է,-ասում է Մարուսը ուղղուելով իր նստած տեղում:- Նրանք ինչօք աղջիկներ են, դուք նրանց լաւ գիտէք, մէկին արդէն հասցրել եմ ամուսնացնել, իսկ միւս աղջկան համար մէկը կար, բայց այն չյաջողուեց: Ես կարծում եմ, որ դուք չէք սխալուի, եթէ նրան էլ դուք վերցնէք... Գիտէք, փոխանակ անձանք չեմ բերելու, վերցրէք նրան, դուք չէք փոշմանի,-իւր ասելիքը աւարտած համարելով, Մարուսը ետ է սահում աւելի յարմար տեղաւորուելու բազմոցի մէջ եւ սպասում: Անսպասելի առաջարկից շփոթուած տանտիրուհին, մտքերի մէջ, ոչինչ չի կարողանում ասել: Նա անխօս մտնում է Մարուսին եւ մէկ ձեռքով իրեն է մօտեցնում կողքին եղած բազկաթուղ եւ դանդաղօրէն տեղաւորում այնտեղ: Նա լուռ է: Տանտիրուհուց անմիջական պատասխանը սկսում է շարունակել իր միտքն աւելի վստահօրէն՝ ընտանեկան, սովորական խօսակցութեամբ.

-Միեւնոյնն է, վաղ թէ ուշ մէկին բերելու էք ձեր որդու համար, այդպէս չէ՞. իմ աղջկան վերցրէք: Դուք ճանաչում էք նրան, նա ձեր տանն է ապրել ու դուք միշտ տեսել էք նրան, կասկածելու ոչինչ չէք ունենայ: Դուք շատ հանգիստ կը լինէք, իսկ ես՝ շատ ուրախ... Մտածեցէք, ես նորից կը գամ...

Տանտիրուհին չէ՞ր կարողանում ըմբռնել, թէ՞ չէր ցանկանում իմանալ նրա ասածը... Նա կորցրել էր իրեն: Մարուսի ասածը երբեք չէր կարող անցնել իր մտքով: Իր միակ որդին դեռ անհաս պատանի էր, որ ծաղկելու էր իր ուսումը ստանալուց յետոյ: Իրենց ընտանիքում այդ հարցի մասին դեռ որեւէ խօսակցութիւն չէր սկսուել: Նա ցնցուած էր եւ չգիտէր ինչպէս ձեւակերպել իր ասելիքը Մարուսին, անսպասելի էր եւ մոլորեցնող, հարուածի պէս ցաւեցնող էր հարցը: Այնուամենայնիւ, նա պատասխանում է.

- Դու գիտես, որ իմ որդին մեկնել է ուսանելու,-ցածր, յուզուած ձայնով սկսում է տանտիրուհին:- Ի՞նչ ամուսնութիւն: Այդ մասին մենք դեռ չենք մտածել... Չե՞ս կարծում, որ նախ ուսում ստանալն է աւելի կարեւոր իրենց այդ տարիքում... Չարմատում եմ քո արած առաջարկի վրայ...- անհանգստացած խօսում է նա ընդհատումներով,-մենք չենք շտապում: Ամէն ինչ պէտք է լինի իր ժամանակին, որ յետագայում զղջալու առիթը չստեղծուի: Երիտասարդութեան տարիքը լեցուն է դժուարութիւններով... այն պէտք է հարթուի ծնողներին օգնութեամբ, բարի խորհուրդներով: Ինչո՞ւ շտապել... ամէն ինչ կը գտնի իր տեղը համբերատա-

րութեամբ, չնայած պատահում է նաեւ, որ հսկողութեամբ առաջնորդող ընտանիքների գաւակներն էլ գնում են ուսում ստանալու եւ այդտեղ էլ մնում են, չեն վերադառնում, ամուսնանում են պատահածի հետ եւ հեշտութեամբ աւարտում այդ հարցը, մինչդեռ նրանցով հպարտացող ծնողները ապագայ ծրագրեր են կազմում գուրգուրանքով, երազում են, մեծ յոյսերով անհամբեր սպասում են նրանց: Ապագան երբեք չես կարող կանխագուշակել, բայց, իհարկէ, պէտք է ջանքեր գործադրել, հետեւողական լինել ու պայքարել նպատակի համար եւ չթուլանալ, ապա թէ ոչ՝ կը խորտակուես անհոգ ծոյլերի պէս մշտապէս...

-Ուրեմն, Ի՞նչ... Կանչէ՛ք, թող գայ, ամուսնանայ եւ յետոյ թող գնայ ու շարունակի իր ուսումը: Ծատերն են այդպէս անում: Աղջիկս կը սպասի նրան: Դուք չէք փոշմանի, մտածէք այդ մասին, ես նորից կը գամ, չէք փոշմանի... չէք զղջալ, - ուղղում է իր ասած վերջին բառը գրական լեզուաճոճով եւ կտրուկ ոտքի կանգնում՝ գնալու համար: Մարուսը չէր վհատուել կամ ուզում էր այդպէս ցոյց տալ: Նա պէտք է արագօրէն կարգաւորէր իր աղջիկների ամուսնութեան հարցը: Նա իր գործադրած ջանքերով մեծ բնակարան էր ստացել պայմանով. աղջիկներին շտապ ամուսնացնել էր պէտք, որ չկորցնէին իրենց արդէն տրուած մեծ տան բաժինը: Այդ հեշտ չէր: Մարուսը յոյսը չէր կտրում, նա շարունակում էր այցելել իրենց նախկին տանտիրուհուն՝ միաժամանակ մտածելով նաեւ այլ հնարաւոր միջոցների մասին: Նրա Աղջիկները կարճատև սակ էին եւ ոչ այնքան երեւելի ու հրապուրիչ: Այնքանով, որ երիտասարդ էին եւ իր հսկողութեան տակ մեծացած հնազանդ անմեղներ, Մարուսը արժեւորում էր նրանց եւ երազում էր ու պայքարելու էր, որ նրանք չլիւնէին իր նման տառապողներ:

Այդ օրուայ տանտիրուհուն իր այցելութիւնը տալուց յետոյ, Մարուսը ժամանակ չէր վատնել յոյսով սպասելով: Նա պէտք է շտապ այլ միջոց գտնէր եւ երկրորդ դատրիկի համար էլ փեսացու գտնէր: Իրենց գիւղի տղաները կը բախտաւորուէին քաղաքում ապրելու եւ բնակարան ունենալու համար: Այդպէս էր Մտածել Մարուսը, երբ քաղաք էր բերել գիւղի անտաշին՝ երկրորդ դատրիկի համար:

Պատահամբ, տանտիրուհին մի օր, խանութի առջեւի մայթին, հանդիպել էր նրանց՝ Մարուսի ընտանիքին, բարձրաձայն իրար հետ վիճելիս: Նա որոշում է անմիջատ հեռանալ, որ լսած չլինէր նրանց իրար ասած զաւեշտական խօսքերը, բայց Մարուսը, որ արդէն նկատել էր իրեն, անմիջապէս մօտենում է եւ նոյնիսկ ուրախ լինում նրա հետ հանդիպելու համար, գրկախառնում է: Մարուսը մի կողմ է տանում տանտիրուհուն եւ փորձում ձեռքի շարժումով մատնացոյց անել հեռուում երեւացող բարձրալարի նորակառուցը եւ ստիպում, որ մօտակայ օրերին անպայման այցելի իրենց:

-Տեսնու՞մ էք, մենք առջեւի չէնք քի ամենավերին շարկումն ենք, -կիսաուրախ ժպիտով ասում է Մարուսը եւ յետոյ գլուխը շրջելով՝ ձեռքի զգոյշ շարժումով նկատել է տալիս իր դատրիկին եւ նրա կողքին կանոնաւոր տղամարդուն: -Այս մէկն էլ, դէ, դեռ չի ամուսնացել: -հարագատի մղումով արագօրէն տեղեկացնում է Մարուսը: Տանտիրուհին, որն

արդէն գուշակել էր նրանց վիճելու հանգամանքը, չէր կարող չնկատել հսկայ, կոշտ մարմնով եւ անճաշակ հագնուած քով, արեւից խանձուած դէմքով, սարից եկած մարդուն, որը նաեւ շատ համարձակ ու կովարար, գայրացկոտ տարեց մարդ էր երեւում: Տանտիրուհին տիրում եւ խղճահարուում է նորահաս աղջկայ համար:

-Այո, իհարկէ, կը գանք,-խտտանում է նա ու մտքերի մէջ խորասուզուած՝ հեռանում նրանցից:

Մարուսը շատ դժուարութիւններ էր յաղթահարել: Տարիներ էր սպասել այդ բնակարանի համար: Ութերորդ յարկի բարձունքից հիմա ինքն էր դիտելու ուրիշներին նոր տան իր յարկի բոլոր կողմերից: Մարուսի մտածումները այլեւս այնքան էլ փողո չէր, վարդգէսը չէր: Նրա մտահոգութիւնը իր դատրիկի հարցն էր: Իր դատրի կեանքը չէր լինելու ինչպէս իրենն էր եղել: Նա չէր կարող անհոգ նստել թէ՛կողմ նոր բնակարանում: Նա շտապել էր անհրաժեշտութիւնից, մեծ բնակարանը պահելու համար իրենց գիւղի տղայի հետ էր ամուսնացրել մէկին, իսկ միւս աղջկայ հարցը՝ վիճել էր առաջացրել եւ նրանից ազատուելու համար՝ նաեւ գայրացնող դժուարութիւններ:

-Կը գամ... չուշանաք...-կրկնում էր Մարուսը տանտիրուհու ետեւից՝ կարիք զգալով մօտիկ մէկի հետ կիսուելու աստիկ պահանջից:

Մարուսը չէր համբերել, մի քանի օր անց, նա ինքն էր գնացել տանտիրուհուն այցելութեան: Գործունեայ էր, չէր կարող սպասել եւ չհրաւիրել նրանց, ցոյց չտալ իր նոր բնակարանը/այդպէս էին կարծում Մարուսի այդ այցի մասին, սակայն դա այդպէս չէր...

Ահա թէ ինչ՝ Տանտիրուհու հետ հանդիպումից յետոյ, մի քանի օրուայ ընթացքում, Մարուսը ամէն հնարք գործադրելով՝ գտնում է միջոցը եւ անմիջապէս ամուսնացնում նաեւ իր երկրորդ դատրիկին: Նա փնտրում ու գտնում է պառաւ մի միջնորդ կնոջ, առատօրէն վարձատրում նրան եւ նրա միջոցով կարգաւորում իր դատրի շտապ ամուսնութիւնը՝ առաւել տուեալներով երիտասարդի հետ: Տղայի ծնողները տանը չեն լինում այդ ժամանակ: Նրանք ամառային ճամբորդութեան են մեկնած լինում: Օգտուելով նրանց բացակայութիւնից, միջնորդը կարողանում է համոզել տղայի մեծահասակ պապ ու տատին եւ փոքրիկ ինձնոջով իրականացնում նրանց ամուսնութիւնը:

Մարուսի շտապ այցելութիւնը տանտիրուհուն նրանց հիւրասիրութեան հրաւիրելու, այսինքն՝ ուսուցիչ-խմբուղ ուրախութեանը մասնակից դարձնելու համար չէր եւ ոչ էլ իր նոր բնակարանը ցոյց տալու ուրախութեան առիթը: Մարուսն ունէր նոր ծագած մտահոգութիւն: Նա շատ լաւ գիտէր, թէ ինչ էր կատարուելու, երբ տղայի ծնողները վերադառնային եւ տեղեկանային կատարուածի մասին: Նա Մտածել էր... անելու էր ամէն ինչ, որ իր դատրի շտապ ամուսնութիւնը մեծ աղմուկ չառաջացնէր տղայի ընտանիքում, այլ ընդունուէր այն որպէս կեանքի բնական ընթացք, եւ հաշտուելով կատարուածի հետ, ընթանար բնական ձեւով եւ դիտուէր այն որպէս բարի երեւոյթ՝ ընդունուէր գոհունակութեամբ եւ հասկացողութեամբ: -«Դու ամէն ինչի տակից էլ դուրս կը գաս...», -չիշում էր Մարուսը վարդգէսի իրեն ասած խօսքերը, եւ ինքը վստահ էր դրանում: Վարդգէսը, գուցէ, կարողանէր էր, բայց Մարուսը գիտէր, որ դա այդպէս էր լինելու, եւ ինքը հիմա

պէտք է այդ ապացուցէր: Մարուսը կազմակերպում է օրը: Նա տանում է տանտիրուհուն ներկայացնելու տղայի մեծահասակներին: Դա կարեւոր էր աւելի քան իր նոր բնակարանի համար խրախուսանք ունենալը: Որպէս մայր, առաջնայինը իր դատրիկի հարցն էր...

-Այս տիկինը մեր տանտիրուհին է,-հպարտօրէն ներկայացնում է Մարուսը հիւրին: Մենք վարձով ենք ապրել նրանց տանը մինչեւ մերը ունենալը: Նա եւ իր ընտանիքը շատ լաւ գիտեն մեզ եւ թէ որքան արժէքաւոր են իմ աղջիկները: Նրանք կարող են վկայել նրանց առաւելութիւնների մասին, -ասում է Մարուսը՝ բոթելով կողքին նստած տանտիրուհուն, որ նա էլ խօսէր, մի քանի խօսքեր աւելացնէր իր ասածներին, գովասանքներ շտապէր իր դատրիկի մասին: Թատերական ներկայացման մէջ քաշուած տանտիրուհին, որ արդէն հասկացել էր Մարուսի իրեն այնտեղ տանելու մտադրութիւնը, շփոթութիւնից չզրկուէր, թէ ինչ ուղղութիւն էր վերցնելու: Անորոշ կացութիւնը եւ տիտուր լուրջութիւնը փոխելու եւ աշխուժութիւն բերելու նպատակով, Մարուսը ձայն է տալիս իր դատրիկին եւ ներսի ննջասենեակից անմիջապէս դուրս է գալիս նրա նորահաս աղջիկը, կարծես պատրաստ իր դերակատարմանը, եւ արագ քայլերով մօտենում, ողջունում է բոլորին եւ ետ գնում իր սենեակը՝ առանց որեւէ մէկի հետ խօսակցելու, մէկ ակնթարթում զգալի դարձնելով, որ նրա թուշուսի բոյնի նման զգալուած մագերի ցանցառ խուրճը, գլխի վերեւի մասում տեղադրուած՝ անիմաստ, անյարմար, տհաճ աւելորդութիւն էր իր ընդհանուր տեսքին եւ չէր թարմացրել, չէր գեղեցկացրել իրեն, գոնէ, մի քիչ անգամ: Նրանից յետոյ յայտնուում է արեւի պէս պայծառ, նուրբ, ուսուական գեղեցիկ դիմագծերով երիտասարդը՝ փեսան: Մարուսը չկարողանալով հանգիստնստել իր տեղում, զգալով նրանց ակնկալելի անհամապատասխանելիութիւնը, ոտքի է կանգնում եւ սկսում անխօս շրջել սենեակում: Նա մտքերի մէջ խորասուզուած, կարծես նախապատրաստուած է ելոյթի: Նա, ջղաձգուած շարժումներով անհանգիստ, քայլում է ետ ու առաջ բազմոցի մէջ հանգիստ եւ անշարժ նստած մեծահասակների առջեւից: Մարուսը չնայած գիտէր իր անելիքը, բայց ծանր էր նրա համար տեսնել իրականը եւ համոզուել, որ իր աղջիկն ու փեսան բոլորովին տարբեր տեսակներ էին՝ ինչպէս նորաբաց ծաղիկն ու ժանգոտուած երկաթադնակը: Նա իր կեանքում շատ դժուարութիւններ էր յաղթահարել եւ հիմա էլ պէտք է պայքարէր իր դատրի երջանկութեան համար: Նա սկսում է տատամսել եւ ինչ-որ բաներ ասել միայն իրեն հասկանալի շնչումով եւ, իբրեւ երկմտում է՝ ասի, թէ՞ չասի... բայց միանգամից, յորդացող անձրեւի պէս շուրջ եւ վարարող ջրահոսքի պէս սկսում է հոսեցնել իր բառերը իրար ետեւից՝ համոզեցնելու, հաստատուելու եւ կայունացնելու համար իրավիճակը եւ, արդէն իր մտքում մշակած իր ասելիքները փորձում է արտաբերել նրախօսութեամբ.

- Մտածեցի, եւ կարծում եմ, որ պէտք է յայտնեմ, թէ ինչու իմ հիւրին՝ տանտիրուհուն, այսօր այստեղ եմ բերել: Պատճառը այս է՝ Ես շատ երջանիկ եմ ինձ զգում եւ ուզում եմ բոլորիդ էլ ուրախ

ՄՆՆԴԱԿԱՆՈՆ՝ ԸՍՏ ԿՆՈՋ ՏԱՐԻՔԻ

Ինչ տարիքի ալ ըլլայ կինը, ան միշտ կը ձգտի նիհարնալ:

Եւ եթէ 20 տարեկանին գեղեցիկ կառուցուածք ունենալու համար մեծ ջանքեր պէտք չեն (միայն քիչ մը համբերութիւն), ուստի տարիներու հետ մարզանքով զբաղիլը եւ սննդականոնի հետեւիլը կնոջ համար աւելի դժուար են: Եւ այդ ամէնը այն պատճառով, որ սննդականոնը եւ տարիքը անբաժանելի են:

Տարիներու հետ կնոջ օրկանիւղը կ'ենթարկուի փոփոխութեան: Մննդականոնի ձեւը, ըստ այնմ, նոյնպէս պէտք է փոխել: Հետեւաբար ամէն տարիքի համար կան համապատասխան սննդականոններ:

Ինչպէս նիհարնալ 30-էն ետք: 30 անց կիններու համար օրուան ստանալիք քալորիներուն չափաբաժինը 2000 քիլոքալորին է: Այդ տարիքին նիհարնալու համար կիներուն պէտք է օրական բնական հանդիսացող քալորիներուն չափը նուազեցնել 500-ով: Ատիկա նիհարնալու համար հիմնական տարբերակն է, որ կ'օգնէ շաքարի նիհարնալ կէս քիլո:

Այդ տարիքի բազմաթիւ մայրերու հիմնական սխալը իրենց փոքրիկներուն հետ միասին քաղցրեղէն ուտելու սովորութիւնն է: Այն համոզումը, թէ փոքրիկ քաղցրեղէնը չի փճացներ կազմուածքը՝ սխալ է: Ըստ գիտնականներու՝ այդպիսի յաճախակի քաղցրակերութիւնը կրնայ քանի մը քիլո աւելցնելու պատճառ հանդիսանալ:

Կշիռքը չաւելցնելու համար փոքրիկ խորամանկութիւններէն մէ-

կը նախքան ուտելը խնձոր ուտելն է: Եթէ ճաշելէ առաջ ուտէք մէկ խնձոր, անիկա կ'օգնէ 190 քիլոքալորի քիչ սնունդ ընդունելու:

Ինչպէս նիհարնալ 40-էն ետք: 40 տարեկանին օրկանիւղին մէջ նիւթափոխանակութիւնը կը դանդաղի: Հետեւաբար գեղեցիկ կազմուածք պահպանելու համար բաւական չէ նիհարնալը: Օրական քալորիներու ընդունումը պէտք է նուազեցնել 4-5 %-ով, այսինքն 2000 քիլոքալորի բնականէն 80-100 քիլոքալորի նուազեցնել: Որպէսզի օրկանիւղը աստիճանաբար վարժուի քիչ քալորիներուն, հիւթերու եւ կազով ջուրերու փոխարէն խմեցէք սովորական ջուր կամ ոչ քաղցր թէյ:

Ասոնք պիտի օգնեն 100-150 քիլոքալորիով նուազեցնել օրական չափը: Նաեւ պէտք է փորձել հրաժարիլ հիմնական ճաշերու միջեւ ինկած ժամանակահատուածին որեւէ բան ուտելէն:

Ինչպէս նիհարնալ 50-էն ետք: 50 անց կիններու համար քիլոքալորիներու օրական չափը 1800 է: Այդ տարիքին նիհարնալու համար պէտք է սահմանել խիստ սննդականոն:

Եթէ անիկա չպահպանուի եւ սնունդը անկանոն ձեւով ընդունուի, այդ ատեն ինսուլինի եւ կլիւքոզի մակարդակը արեան մէջ կ'աւելնայ, որ կը յանգեցնէ ճարպային կուտակումներու: 50 անց կիններու համար լաւ այլընտրանքային սննդականոնի տեսակ են սոյաջի ուտելիքները: Կաթը եւ միսը փոխարինելով սոյաջով՝ կարելի է դանդաղօրէն, բայց վստահօրէն ազատիլ աւելորդ կշիռքէն:

ԵՕԹ ՕՐԵՆՔ, ՈՐՈՆՔ ԿԸ ՓՈՆԵՆ ՁԵՐ ԿԵԱՆՔԸ

Գոյութիւն ունին օրէնքներ, որոնց վրայ ալ կը հիմնուի մեր կեանքը: Կարեւոր չէ՝ տեղեակ էք այդ օրէնքներու մասին, թէ՛ ոչ, միեւնոյնն է, անոնք մեծապէս կ'ազդեն ձեր կեանքին վրայ:

Եթէ կը փափաքիք ապրիլ ներդաշնակ կեանքով եւ դրական փոփոխութիւններ տեսնել, ուրեմն անհրաժեշտ է հետեւիլ այս եօթը օրէնքներուն:

1. Ինչ ցանես, այն ալ պիտի հնձես: Ասիկա ամենակարեւոր օրէնքներէն մէկն է, որ նաեւ յատնի է «պատճառի եւ հետեւանքի» օրէնք անունով: Կեանքի մէջ ինչ ալ ընէք, անիկա ուղղակիօրէն պիտի վերադառնայ ձեզի. այլ կերպ հնարաւոր չէ: Եւ եթէ դուք մշտապէս բացասական ուժ կը հաղորդէք միւսներուն, ուրեմն անիկա կը փոխանցուի նաեւ ձեզի:

2. Արարման օրէնք: Աստուած ստեղծած է մարդը եւ արարման շնորհ տուած անոր: Մարդը ինչ կը մտածէ, ի վերջոյ կ'իրականանայ: Ուստի, հետեւեցէք ձեր մտքերուն, քանի որ անոնք անպայման կը կատարուին:

3. Հնազանդութեան եւ համատեղութեան օրէնք: Երբեմն յառաջ շարժելու, նոր ձեռք բերումներու հասնելու եւ ճիշդ որոշումներ ընդունելու համար պէտք է որոշ ժամանակ դադար առնել: Յաճախ նոր նուաճումներ արձանագրելու համար մենք կը շտապենք, կը տանջենք մենք մեզ եւ իբրեւ արդիւնք կը հիւժինք եւ ուժասպառ կ'ըլլանք՝ առանց ցանկալի արդիւնքի հասնելու: Հետեւաբար, երբեմն պէտք է ընդունիք,

որ ամենակարող չէք եւ դադարը հարկաւոր է ձեզի:

4. Երախտագիտութեան օրէնք: Ամէն ինչի համար պէտք է երախտապարտ ըլլալ: Եթէ ձեր գլխուն տանիք ունիք, կը կերակրուիք եւ ունիք ամենամանրաժեշտ իրերը, ուրեմն պէտք է շնորհակալ ըլլալ անոնց համար: Անգամ մանրութեան օրէնք պէտք է երջանկութիւն փնտռել ու գտնել:

5. Սիրոյ օրէնք: Հաւանաբար անհնար է պատկերացնել, թէ ինչպիսի հրաշքներ կը կատարուին աշխարհի երեսին, երբ մարդիկ իրարու բարին կը կամենան եւ կը տարածեն: Ներդաշնակ կեանք վարելու համար պէտք է ենթարկուիլ սիրոյ օրէնքին՝ սէր եւ բարութիւն պարզեւել միւսներուն:

6. Ներելու օրէնք: Երջանիկ եւ հանգիստ խղճով ապրելու համար պէտք է ներել գիտնալ: Ի հարկէ, կան իրավիճակներ, երբ հնարաւոր չէ չվիրաւորուիլ, սակայն սեփական հոգիի խաղաղութեան համար պէտք է ներել եւ ուրախ ու ազատ ապրիլ:

7. Հաւատքի օրէնք: Այն, ինչ կ'ակնկալէք այս կեանքէն, կը վկայէ ձեր հաւատքի մասին: Եթէ կ'ակնկալէք, որ ձեզի աշխատանքն պիտի հեռացնեն, պիտի բաժնուիք ձեր կողակիցէն, ուրեմն դուք ատոր կը հաւատաք: Իսկ եթէ կը հաւատաք, որ ձեր գործը պիտի զարգանայ, երազանքները պիտի կատարուին, ուրեմն այդ է ձեր հաւատքը: Այսպիսով, եթէ բարի ակնկալիքներ ունիք, ուրեմն բարին կը կատարուի: Հաւատքը մեծ ազդեցութիւն ունի մարդու կեանքին վրայ:

ԻՆՔՆԱԲԱՒ ԿՆՈՋ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

Ինքնաբաւ կինը երջանկութեան ետեւէն չ'իջնար: Ան ընդհանրապէս ոչինչի ետեւէն չ'իջնար:

Երջանկութեան ետեւէն վազքը մարզանքի ամենատարածուած եւ ամենայիմար տեսակն է: Մենք բոլորս ալ որեւէ ձեւով կը վազենք՝ դէպի պայծառ ապագայ, դէպի վաղուան օրը, յաջորդ տարին, եւ այլն: Իսկական կինը չ'զբաղիր այդ մարզանքով: Ան պարզապէս կ'ապրի միշտ գտնուելով ներկային մէջ:

Իսկական, ճշմարիտ, այս է ամենահետաքրքրականն ու կարեւորը այն բոլորէն, որ կը գրաւէ անոր ուշադրութիւնը:

Ի հարկէ, ան ունի ապագայի ծրագրեր, բայց իր կեանքը չի յետաձգեր մինչեւ վաղը: Ան չ'սպասեր, որ իր իսկական կեանքը սկսի այն ժամանակ, երբ ինքը, օրինակ, նիհարնայ, երբ վերջապէս իր արքայազնը յայտնուի, կամ յարմար վիճակ ըլլայ, եւ այլն: Ան կ'ապրի ՀԻՄԱ:

Իսկական կին ըլլալը մեծ առաւելութիւն է, եւ ան կը հասկնայ ատիկա: Սրտի թրթիռով կը վերաբերի իր կին ըլլալու փաստին, եւ անոր մէջ յատուկ արժէք կը տեսնէ: Ան ոչ միայն գիտէ, որ ինքը կին է, այլեւ կը զգայ զայն: Անոր համար իսկական կին ըլլալը փորձութիւն, ծանր աշխատանք կամ խաչ կրելու պէս բան չէ, զոր պէտք է տանի: Անիկա նուէր է եւ ճակատագրի բարեհաճութիւն: Իսկական կինը կանացի է բոլոր մակարդակներու վրայ՝ ներքին (զգացողութիւններ, զգացմունքներ, մտքեր) եւ արտաքին (մարմին, հագուստ եւ վարքագիծ):

Ան կ'ապրի իր ընթացքին մէջ: Եթէ դուք չափազանց դանդաղ կ'ապրիք, դուք չէք ունենար զգացողութիւն, որ ասիկա կեանքն է, իսկ եթէ կ'ապրիք չափէն աւելի արագ, դուք չէք կրնար զգալ կեանքը: Իւրաքանչիւրս գոյութեան իր ընթացքն ունի: Իսկական կինը լաւ գիտէ եւ կը զգայ այդ ընթացքը եւ կ'ապրի անոր համապատասխան: Ան ինքը կը կարգաւորէ իր ծանրաբեռնուածութիւնը եւ անով իսկ ընթացք կը հաղորդէ գինք շրջապատող հանգամանքներուն:

Իսկական կինը կ'ապրի այնպէս, որ ընէ իր ուզածը, եւ միեւնոյն ժամանակ՝ չկորսնցնէ կեանքի

հանդէպ քաղցրութիւնը:

Իրեն համար ինքը առաջին գիծի վրայ է: Եւ ատիկա չի նշանակեր, որ անանձնասէր է, չոր, ոչ զգացմունքային, անտարբեր կամ ցինիկ: Պարզապէս ան գիտէ, որ այլոց խնդիրներով չափէն աւելի զբաղելու տակ թաքնուած է սեփական կեանքով ապրելու վախը: Իսկական կնոջ իր կեանքը հետաքրքրական է: Ան երբեք չի կորսնցնէ իր անձնական տարածքի արժէքաւորութեան զգացողութիւնը: Բայց միեւնոյն ժամանակ՝ ունակ է օգնել, նեցուկ ըլլալ այլոց՝ անոնց կեանքի դժուար պահերուն:

Ան չ'ապրի հասարակական կարծիքին տուրք տալու համար: Կարելի չէ ըսել, թէ ան կ'արհամարհէ հասարակական կարծիքը, ուղղակի չ'ապրի ամէն գնով հասարակութիւնը գոհացնելու համար:

Իսկական կինը ունի կեանքի իր ուրուագիծերը, գորս ինքը կը յղանայ եւ կ'իրականացնէ: Եւ եթէ անոնք չեն համապատասխաներ համընդհանուր չափանիշներուն, ան որ այնքան ալ չ'անհանգստացներ:

Ան շատ լաւ գիտէ, որ հնարաւոր չէ բոլորին համար հաճելի ըլլալ: Ինքնաբաւ կինը կ'աշխատի իր վրայ, բայց ատիկա երբեք չ'ընէր ոեւէ մէկուն հաճելի թուալու կամ անոր հաւանութեան արժանանալու համար: Ատիկա չ'ենթադրէր, որ իրեն համար միեւնոյնն է, թէ ինչ կը մտածեն իր մասին: Իր թերութիւններուն նկատմամբ իսկական կինը ներողամիտ է, ո՞վ չունի թերութիւններ: Ան կը տեսնէ զանոնք, սակայն մեծ ողբերգութիւն չ'ապրի անոնց համար: Չի թաքցնէր, բայց եւ համընդհանուր քննարկման նիւթ չի դարձնէր:

Եթէ նոյնիսկ չափազանց ծանրաբեռնուած է, իսկական կինը, անպայման, ժամանակ կը գտնէ լաւ տեսք ունենալու համար: Իսկական կինը երբեք ինքզինք իբրեւ գոհ չ'ընկալեր եւ չի մատուցեր:

Իսկական կինը կը սիրէ իր տարիքը միշտ:

Ան կ'ապրի իր ներկայ, իրական տարիքով՝ օգտուելով անոր ընձեռած բոլոր առաւելութիւններէն:

Իսկական կինը գիտէ, որ իւրաքանչիւր տարիք ունի իր գեղեցկութիւնը ու հմայքը:

ԳԻՆԻՆ ԴՐԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆ ԿՈՒՆԵՆԱՅ ԿԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Գինին դրական ազդեցութիւն կ'ունենայ կիններու վրայ

Վերջերս կատարուած հետազոտութիւնները ցոյց տուած են, որ այն կինները, որոնք կարմիր գինի կը խմեն, ոչ միայն կը նուազեցնեն սրտի հիւսնաղութիւններուն վտանգը, այլեւ՝ հագուադէպօրէն կը գիրնան եւ աւելի դիւրութեամբ կը կորսնցնեն ստամոքսի հատուածի ճարպերը:

Հետազոտութիւնները ցոյց տուած են նաեւ, որ գարեջուրը, սպիտակ գինին եւ լիքէօրները կրնան նուազեցնել կշիռքը:

Միջին տարիքի եւ աւելի մեծ կիններ, որոնք կանոնաւոր կերպով կարմիր գինի կը խմեն, կը յաջողին պահպանել մարմնի սովորական ծանրութիւնը: Նախապէս կատարուած հետազոտութիւնները ցոյց տուած էին, որ որոշ ալքոլային խմիչքներու չափաւոր օգտագործումը դրական ազդեցութիւն ունի մարդու օրկանիւղին վրայ, բայց այս հետազոտու-

թիւնը առաջինն էր, որը ցոյց տուաւ, որ ալքոլը կրնայ կարգաւորել մարմնի սովորական ծանրութիւնը:

Բնականաբար անհարժեշտ են բազմաթիւ հետազոտութիւններ եւ ուսումնասիրութիւններ, որոնք պիտի որոշեն, թէ ինչպէս կ'ազդէ ալքոլը կիններու առողջութեան վրայ: Հետազոտող բժիշկներէն մէկը կը բացատրէ. «Իհարկէ, այս պարագային շատ մեծ նշանակութիւն ունի հոգեկան կարգավիճակը եւ, ի հարկէ, վարքի փոփոխութիւնը, որոնք կրնան ազդել այն մարդոց վրայ, որոնք օրուան ընթացքին ալքոլ կ'օգտագործեն»:

Եթէ ճաշի ժամուն մէկ զաւաթ գինի կը խմէք, անիկա ոչ մէկ կերպով կը վնասէ ձեր օրկանիւղին: Ամէն ինչ կը յանգի այն եզրակացութեան, որ միայն ֆիզիքական աշխատանքի եւ առողջ սննդակարգի հաւասարակշռութիւնը կը կարգաւորէ օրկանիւղի աշխատանքը եւ առողջութիւնը կը պարզեւէ:

ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ

Շարունակուած էջ 15-էն

առիւծ, ցուլ, գոմէշ, թռչնազգի-ներ, եւայլն:

Չորրորդ գօտին կը ներկայացնէ խաղողի չընդհատուող որդագալարներ, աշխարհիկ կեանքէն առնուած յարգաքանդակներ, այգիի մշակում, բերքահաւաք, գինիի պատրաստութիւն, կռիւ՝ բերքը յափշտակող կենդանիներու դէմ:

Հինգերորդ եւ վեցերորդ գօտիներուն վրայ պատկերուած են սարսափահար եղնիկներու, եղջերուններու եւ քարայծերու քանդակներ, որոնք կը հալածուին առիւծներու եւ յովազներու կողմէ:

Տակաւին, պատերուն վրայ քիչ մը ամէն տեղ կը տեսնենք խաչքարերու, հայերէն գիրերու եւ սուրբերու քանդակներ, որոնք հաւանաբար թագաւորական ընտանիքին անդամներն էին, սուրբերու կերպարանքներով քանդակուած:

Կը տարուիս մտածելու թէ ինչպէ՞ս մեզմէ աւելի քան հազար տարիներ առաջ հայ ստեղծագործ միտքը ստեղծած է նմանատիպ եկեղեցի մը իր իւրաքանչեւ յղացումներով եւ լուծումներով: Որքան բարձր պէտք էր եղած ըլլար մեր մշակոյթի եւ քաղաքակրթութեան մակարդակը, որ մեր թագաւորը հակադասական գումարներ յատկացուցած էր հոգեմտաւոր մշակոյթի նման կոթող մը բարձրացնելու եւ յետագայ սերունդներուն ժառանգ ձգելու:

Սբ. Խաչ եկեղեցւոյ նորոգութիւնները տակաւին վերջացած չէին: Եկեղեցիին շրջակայքի խաչքարերը, մենաստանները, գերեզմանները պէտք էր շտկուէին, մաքրուէին, եւայլն:

Հայաստանէն եկած այդ զբօսաշրջիկները էջմիածինէն մոմեր բերած էին եւ եկեղեցիէն դուրս, կողքին, մասնաւոր յատկացուած տեղ մը կը վառէին այդ մոմերը: Երբ տեսան որ մենք մոմ չունէինք, անմիջապէս մեզի ալ տուին իրենց մոմերէն: Վերջապէս Հայաստանցի էին...:

Աղթամար կղզիին դիմաց, կապուտականաչ ջուրերէն եւ վանքաղաքէն անդին, կը պարզուէին Սիփանա եւ վարագայ լեռներու վեհանիստ տեսարանները: Հոս կը զգաս թէ ինչու՞ եւ ինչպէ՞ս Հայու Ոգին ծնունդ առած է աշխարհագրական այս գեղեցիկ եւ վեհ երկրամասին մէջ:

Յամաք վերադարձին, նախապէս եղած կարգադրութեամբ մը (Ռամաստանի շրջան էր) համադամ ձուկ ճաշակեցինք տապկուած գետնախնձորի, բրինձ փիլաւի, սալաթի, գինիի, գարեջուրի ու այլ մրգաջուրերու ընկերակցութեամբ: Ծաշարանատէրը հայ է ըսին:

Երբ ճաշարանէն դուրս ելանք եւ դէպի մեր պասը կ'ուղղուէինք, տեսանք որ երկու փոքր պասը կային կանգառին մէջ եւ կարծես թէ հայերէն կը խօսէին ոմանք: Երբ մօտեցանք, տեսանք որ իրապէս հայ զբօսաշրջիկներ էին, էջմէածնի շրջանէն: Բնականաբար Եռա-

գոյն դրօշակ մըն ալ բերած էին: Երբ իմացան որ մենք ալ Ամերիկայէն «թուրիստ»ներ ենք, իջան պատերէն եւ տաք ու սիրալիւր խօսակցութեան բռնուեցան մեզի հետ (ամէն մարդ Լոս Անճելոսի մէջ մէկը ունէր...): Յանկարծ պասին մէջէն հայկական պարեղանակներ սկսան նուագուիլ եւ... խմբային շուրջպարերը սկսան: Պահ մը մոռցանք որ թուրքիոյ մէջ ենք եւ թէ ամէն տեղ լրտեսներ կրնան ըլլալ: Որով հոգը: Եռագոյն դրօշակը պարզած, կատաղի կը պարէինք մե'ր հողերուն վրայ, նոյնիսկ մեր խումբի Պրն. Արամը որ միշտ իր միտքերուն հետ առանձնացած կը խոկար, սկսաւ պարել, ցատկուտել:

Մեր կորսուած հայրենիքի սուրբ հողին վրայ մեր ոտքերու դոփիւններու արձագանգը մեզի կը վերադառնար Սբ. Խաչ եկեղեցւոյ պատերէն: Ելած փոշին խորունկ կը շնչէինք եւ մեր թոքերը կը լեցնէինք մեր պայտերուն ածիւններովը կարծես: «Մըրկաւ» իրարմէ բաժնուած հայեր, հայկական գրաւեալ հողերու վրայ իրարու հանդիպած, Եռագոյնով, հայկական երգ ու պարով գիրար «կը մխիթարէինք»:

Արեւելեան Հայաստանի քաղաքացիներն ու Արեւմտեան Հայաստանի նահատակուած բնիկներու զաւակներն ու թոռները եղբայրացած՝ Սարոյեանական Նոր Հայաստանը հիմնելու պատրաստ էինք, թէկուզ մեր երգ ու պարով եւ ... արիւնով: Օր մը, Հայաստանի մէջ կրկին հանդիպելու մաղթանքներով բաժնուեցանք իրարմէ: Քանի մը օր ետք իմացանք որ Հայաստանցի մեր այս եղբայրները բարձրացած են Կարսի բերդը եւ Եռագոյնը պարզած հոն: Թուրք եւ քիւրտ պահակները բարկացած են, եւ մինչեւ անգամ տեղական թերթ մը անդրադարձած է այս դէպքին մասին եւ պատիժ պահանջած:

Ոչինչ, Հայաստանցի մեր եղբայրները այդ օր հաւանաբար քանի մը գաւաթ աւելի կոնծած էին: Վանի անառիկ բերդին մագլցումը իրապէս որ հերոսութիւն էր մեզի համար: Իսկապէս կ'ապրիս նախնիներուդ փառքը: Որեւէ բանակի համար հաւանաբար անկարելի բան էր այդ բերդը գրաւելը: Ուրարտացիներուն կողմէ 825 թ.ա. թուականին շինուած այս բերդը ունի 70-80 մետր լայնք, 1.5 թ.մ. (մօտ 2500 մետր) երկայնք եւ 80 մետր բարձրութիւն: Բարձր, ժայռակերտ եւ անմատչելի բլուրի մը վրայ շինուած էր այդ: Մէկ կողմը հաւանաբար 75 եւ աւելի մետր ուղղանկիւն անդունդ, միւս կողմերը թէ՛ մը աւելի «մատչելի»:

Քիւրտ պահակ-առաջնորդներու օգնութեամբ մագլցեցանք, գիրար հրելով, իրարու քաշքշելով: Բլրան անառիկ մէկ կողքին, մասնաւոր պաշտպանուած նեղ ու ծուռ աստիճաններէ իջնելով մտանք Ուրարտացի թագաւորներու դամբարանները, որոնց մէկ քանի սենեակները վերջերս յայտնաբերուած էին

եւ...կողոպտուած: Ժայռերուն վրայ հանդիպեցանք Ուրարտական բազմաթիւ արձանագրութիւններու:

Բերդը նորոգութեան մէջ էր: Երբ ելանք վեր, մեր առջեւ պարզուած տեսարանը պարզապէս անհաւատալի էր: Աշխարհը ոտքիդ տակ ասացուած քը հոս կ'իմաստաւորուէր: Եւ մտածել որ մեր հայ արքաները այստեղէն կառավարած եւ պաշտպանած են իրենց ժողովուրդը: Եւ մտածել որ այս պատերն ու ժայռերը լուռ ականատեսները եղած են բիւրաւոր հայ նահատակներու սպանդին: Չե՞ս հայհոյեր: Չե՞ս բողոքեր առ Աստուած հազարաւոր անմեղ մանուկներու սպանդին դէմ կամ անոնց բռնի իսլամացումին...

Ինչ հեզմանք: Ուրարտական-հայկական այդ անառիկ բերդին վրայ թրքական արիւնոտ դրօշակը կը ծածանէր պայծառ արեւին անմեղ շողերուն տակ:

Բերդի բարձունքի հարաւային կողմը կը տեսնէինք Վանի հայկական հին թաղամասերը, դաշտագետինի վերածուած: Ուշադիր աչքերով եթէ նայիս, կրնաս նշմարել ուրուական «յատակագիծ»ները մեր տուններուն եւ թաղերուն՝ խոտերով ծածկուած: Արդեօք թուրքերը որքա՞ն օսկի գտան հայկական թաղամասերը քանդելու ժամանակ:

Բերդին ստորոտէն քիչ մը անդին բազմաթիւ կրպակներ կային ուր տեղական յուշանուէրներ կը ծախուէին: Իմացանք որ այդ կրպակներէն մէկուն տէրը քրտացած հայուհի մը թոռնիկն է: Անուշիկ, երիտասարդ կին մըն էր: Բնականաբար մեր գնումները, քիչ մըն ալ աւելիով, իրմէ ըրինք եւ

քաջալերեցինք զինք որ չմոռնայ իր հայկական արմատները:

Վանը արդիական քաղաքի վերածուած է: Նոր, ճաշակաւոր, բարձրաչար կը պատշգամաւոր շէնքերով, բլուրներուն վրայ բազմաթիւ առանձնատուններով, մաքուր, լայն եւ ծառերով եզերուած ճամբաներով, բազմաթիւ փապուղիներով (թիւնել), մեծ դպրոցներով, համալսարաններով, մեծ հիւանդանոցներով, շուկաներով եւ տակաւին մասամբ նորին: Երբ փապուղիէ մը կ'անցնէինք, մեր ուղեկցորդը կէս կատակ □ կէս շիտակ պատմութիւն մը պատմեց: Այսպէս, երբ Վանի կուսակալութիւնը կ'որոշէ փապուղիներով լեռներու մէջէն ճամբայ բանալ, ճապոնական ընկերութիւն մը իր ծրագիրը կը ներկայացնէ եւ կ'ըսէ որ ժամանակ շահելու համար լեռան երկու կողմերէն փորելով կու գանք եւ եթէ առաւելագոյնը 3 կամ 4 մետրով միացման վայրի հանդիպումը փախցնէք, կրնանք այդ պարագային պոտիկ դարձուած քով մը միացնել փապուղին: Գերմանական ընկերութիւն մը նոյնպէս կը ներկայացնէ իր ծրագիրը եւ կ'ըսեն որ եթէ 1 կամ 2 մետրով միացման հանդիպումը շուարինք, գեղեցիկ լուծումներով կը միացնենք փապուղին: Թրքական ընկերութիւն մը եւս իր ծրագիրը կը ներկայացնէ եւ կ'ըսեն որ երկու կողմերէն փորուած փապուղիները եթէ իրարու հանդիպին, լաւ է, ապա թէ ոչ՝ որոշուած վայրին վրայ, երկու փապուղի կ'ունենանք...:

Արդիական պանդոկի մը մէջ Լաս Վէկասեան փառաւոր պիւլֆերն թրիքէ մը ետք, ընկերային հաճելի գրոցներով աւարտեցինք մեր այդ օրուան ուխտագնացութիւնը

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐԵՐ

Օգոստոս 8, 2015
«Փոքր Նայթ» կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան

Սեպտեմբեր 12, 2015
«Արաբական Գիշեր» ըթրիք, կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան:

Սեպտեմբեր 20, 2015
Հայաստանի Անկախութեան 24րդ տարեդարձի փառատօն-դաշտահանդէս, Կլէնտէյլի Վերտուկո զբօսայգի, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան:

Save the Date

NOV. 7, 2015-Saturday, St. Peter Church Ladies Society 57th Annual Fashion Show and Luncheon, One Hundred Years and Flourishing, at Four Seasons, Westlake Village, CA



ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

WESTERN DISTRICT COMMITTEE

2015 GALA

SATURDAY, SEPTEMBER 26, 2015

SAVE THE DATE

ԻՇԽԵԼՈՒ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՄԻՋԵՒ

Շարունակուած էջ 6-էն

թեամբ»:

Ուրեմն՝ Հայաստանը կառավարողներուն (ոչ թէ իշխողներուն) պարտականութիւնն է գործ հայթայթել, աշխատանքի մղել ժողովուրդը, իսկ երիտասարդութիւնը գուեհիկ նշանախօսքերով գուարճանալու, «շրջան» բառով անվա-

յելուչ բառեր մոգոնելու եւ Բաղրամեան պողոտան աղբատականներով փակելու փոխարէն՝ պարտի աշխատիլ եւ արարել:

Իշխելու եւ կառավարելու միջեւ տարբերութիւնը մեծ է պարոնայք: Մենք իմաստուն կառավարիչներու կարիքն ունինք եւ ոչ թէ որկրամոլութեան եւ ազհուլութեան պիտոյեան իշխողներու:

ՄԱՐՈՒՍԸ

Շարունակուած էջ 17-էն

տեսնել եւ ձեր ներկայութեամբ յայտնել իմ ուրախութեան հանգամանքը: Գիտէ՞ք, իմ աղջիկս նորահարս է, ամուսնացած...ես շատ ուրախ եմ, - ձեռքի շարժումով ցոյց է տալիս նրա սենեակի կողմը, - Այսօր, առաւօտեան նա ինչ-որ ձեռով ուզեց ինձ հասկացնել մի բան՝ ամաչելով, քաշուելով, կմկմոցով, որը ես ըմբռնեցի: Նա ակնկալում էր իր մայր դառնալու մասին: Պատկերացնում էք, թէ դա ինչ անակնկալ էր: Կարծում եմ այդ լուրը ձեզ էլ կը շփոթեցնէր, այդպէս չէ...բայց լաւ է, որ դուք էլ տեղեակ լինէք իմ միջոցով...Դէ, ուրեմն իմացէք: Այդպէս է: Նա մայր է դառնալու: Ես պէտք է վատահամ ձեզ, ուրիշ ի՞նչ կարող եմ ես ասել...-նայելով մեծահասակներին, ասում է Մարուսը գլուխը շարժելով: Իսկ նրանք, կարծես թատրոնում նստած ներկայացում էին դիտում՝ առանց իմաստն հասկանալու, լուռ էին, կամ մեղաւորներ էին զգում իրենց, որ տղայի ծնողներին չէին յայտնել եւ դեռ չէին էլ ըմբռնում, թէ ինչպէս ամէն ինչ կատարուած էր իրենցից անկախ, հեշտ ու արագ: Երբ ծնողները վերադառնալին՝ ի՞նչ էին ասելու, ինչպէս էին բացատրելու կատարուածի մասին...Նրանք չէին հասկանում, թէ ինչ էր կատարուած իրենց հետ, կախարդուածների պէս թոյլ, ենթարկուող, անզիտակից էին զգում իրենց:

Մարուսը աւարտել էր իր գործը եւ կարող էր արդէն գնալ տուն՝ յոյսով, թեթեւացած: Նա յաջողեցրել էր իր ծրագիրը: Թող մտածէին ուրիշները ինչ որ ուզում էին մտածել, դա կարեւոր չէր այլեւս, ինքը ճիշտ էր վարուել: - Կարծում եմ, այսօր իրականացաւ իմ բոլոր երազանքներս, - շարունակում է նա աւելի կրքոտ, իշխող ձայնով եւ օրօրում իր կանգնած տեղում, - Ես երջանիկ եմ, - կրկնում է նա: - Ամուսինս էլ, երբ վերադառնալ իր գնացած տեղից, ես տուն, տեղ ունեմ արդէն պատրաստ բոլորի համար: Մենք միասին ենք ապրելու: Հիմա ես երջանիկ եմ: Փող վատակելը միշտ էլ դժուար գործ էր ինձ համար, հեշտ չէր, դա պայքար էր, որ ես անվրդով կատարում էի հաւատքով, բազում երազանքներս իրականացնելու յոյսով: Կարծում եմ, ես այլեւս կարիք չունեմ շատ բաների համար մտահոգուելու: Վստահ եմ, որ իմ այս աղջիկս էլ երջանիկ է լինելու, այդպէս չէ... - ուղղում է հարցը Մարուսը մեծերին, իսկ նրանք՝ դեռ վախեցած, միայն լուռ էին, չէին պատասխանում կամ ի՞նչ կարող էին ասել... միեւնոջն էր, ամէն ինչ կատարուել եւ անցեալ էր, եւ անցեալը կարելի չէր փոխել... - Հիմա ես միայն ուրախանալու առիթն եմ տեսնում, - ժպտում է Մարուսը, ձեւացնում իրեն երջանիկ եւ շարունակում է հետեւողականօրէն հաստատել իր ասածը՝ - Տղայի ծնողները պէտք է գոհ լինեն իրենց գաւակին ամուսնացած տեսնելու համար: Նրանք էլ ոչինչ չեն ունենայ անելու: Մեր երիտասարդները արդէն հասկացել են իրար եւ երջանիկ են, դա է կարեւորը, այդ այդպէս է... Հիմա հանգիստ հոգով ես կարող եմ գնալ տուն, - նա շրջում է եւ դանդաղ քայլերով մօտենում փոքրիկ սեղանին, որի վրայից վերցնում է իր պաշտասակը, կախում իր ուսից եւ պատրաստում է դուրս գալ սենեակից՝ տանտիրուհու հետ միասին: Նա օդային համբուր է ուղարկում ննջասենեակի կողմը, որտեղ գոյգերն էին եւ այլեւս չէին երեւցել, դա էլ էր, կարծես, պայմանաւորուած: Նրանք,

կարծես, թաքնուած էին ներկաների հայեացքներից, կարծիքներից, կասկածներից, վախից, կամ զիտակցում էին յետագայում կատարուելիքների մասին: Մարուսը մօտենում է մեծերին եւ շնչում նրբօրէն: «Նա երբեք չէր մոռանում նրանց հետ քաղաքավարի լինելու իր վարուելաձեւի մասին»: - Մնացածն արդէն ձեր գործն է, - ասում է նա: - Վստահ եմ, դուք փորձառու էք եւ շատ հոգատար էք վերաբերուելու իմ դատեր հետ, - ժպտում է նա եւ հանգիստ շարժումով գլուխը թեքում մէկ՝ մէկ ուսի վրայ, յետոյ՝ միւսի: - Իրականում, նրա մէջ տազնապն էր եռում եւ աչքերի առջեւ մօտեցող հօրատուժ, աւերող Թայֆունի պատկերն էր գծագրուում, այն իրական փոթորիկի, որ անպայման հասնելու էր շուտով, եւ ինքը դիմակայելու էր ու փշրելու, ամէն կերպով, որ իր դատրիկի կեանքը չլինէր երբեք ինչպէս իր կեանքն էր եղել:

Դրսում, Մարուսը շնչում է սառը օդը եւ ոգեւորում միանգամից՝ շատն անցել էր, քիչն էր մնացել: Իր նոր բնակարանի վերին յարկից հիմա ինքն էր երկար դիտելու մինչեւ հեռուները... տանտիրուհին կ'այցելէր իրեն, վարդգէսն էլ՝ «... այ կնիկ, դու ճանճ ես, ճանճ...» կը շարունակէր, յետոյ ի՞նչ: Մարուսը հաշիւ անել գիտէր, դատել գիտէր, վարդգէսը՝ մարդասէր, յանցագործ էր: Յամենայն դէպս, տանտիրուհին ճիշտ էր՝ նրա որդին չէր վերադարձել: Իսկ Թայֆունն փոթորի՞կը... Դա... դա եկել ու անցել էր...: Իսկ ես դեռ շրջում եմ քաղաքի ամենամարդաշատ փողոցում, ուր աղմուկ է միշտ, եռուզեռ: Ես հիացած դիտում եմ բարձրաչարկ նորակառուցների նորաձեւութիւններին, զարդաքանդակներին. մէկը վիճում է, միւսը՝ հայհոյում, մէկը ուրախ քրքրում է, միւսը՝ փող աղերսում, բոլորն այնքան տարբեր են այս պողոտայի մայթերին... հաւաքուել են, եւ շատ են նրանք, կարծես իրար միմիջարեւոյ կամ վշտակցելու են եկել: Բայց,

մի պահ, երբ մտածում եմ, տեսնում եմ, որ նրանք էլ, մենք էլ, բոլորս էլ նոյնն ենք, մարդիկ ենք եւ հարեցողները, եւ մուրացիկները, թմրադեղեր վաճառողներն ու անօթեւան մարդիկ, բոլորը: Բայց, նրանք են միայն, որ աղտոտում են, փճացնում են, պղտորում են միջավայրը եւ ոչ թէ մենք: Ինչու... Լուրերից տեղեկացալ, որ նոյնիսկ տիեզերքում էլ պահանջուած է անմիջապէս փորձաթափոնների մաքրման գործով զբաղուել, ուր դեռ բնակիչներ չկան, բայց լինելու են... Դա մարդկային պահանջ է, ապրելու շարունակական պահանջ...: Շէնքերն էլ, որ այնքան տարբեր են շրջապատում՝ հին ու անուղին են, մաշուած են կամ՝ նոր են, զարդարուն ու շքեղ են, քանդակաշատ, բարձր ու վեհ են, նոյնն են, բոլորն էլ գեղեցիկ տեսակներն են շինութիւններին... հիանում եմ դիտելով նրանց ու միշտ մտածում, որ պէտք է ինամբով ու հոգատարութեամբ պահպանուեն նրանք որպէս մարդկային ստեղծագործ մտքի անկրկնելի, սքանչելի հարամտութիւններ:


Գրաւուած Թուական

Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 20, 2015

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			



Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938